№ 134 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 **1896** ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16 № 134

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ **1897** ԹԻԱԿԱՆԻ

25-ՐԴ ՏԱՐԻ „ՄՇԱԿ" 25-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրօգրամայով և նոյն ուղղութեամբ: Մենք սահմանում ենք սեփական հեռագիրներ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ:

Մարթա Բարսեղեան, Նունէ Մովսիսեան Գալստեանցներ, Նատալիա Մանուչարեանց և դպիր Ստեփաննոս Երամեանց յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին, առաջինը՝ իր սիրելի որդու, երկրորդը՝ իր թանգագին ամուսնու, երրորդը՝ իր եղբօր, իսկ վերջինը իր փեսայ

ԳԷՈՐԳ ՔԱՀԱՆԱՅ ԳԱԼՍՏԵԱՆՑԻ

մահը: Յուղարկաւորութեան հանդէսը կը կատարվի շաբաթ օր, ամսոյս 16-ին, երեկոյեան ժամը 3-ին, իր սեփական տնից՝ դէպի Վանքի մայր-եկեղեցին, իսկ թաղումը կը կատանայ կիրակի օր, նոյեմբերի 17-ին, Վանքի գաւթում: Հոգեհանգիստ ամեն երեկոյ, ժամը 5½-ին:
2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վատ նշան է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ախալքալաքից. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Ասխաբադից. Նամակ Աէքանդրօպոլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Մահվան պատիժներ. «Իգդամ» և «Թէրջիմանը Հազիգաթ». Լուրեր Կ. Պոլսից. Վանի լիճը. Ռէֆորմների յանձնաժողովը. Մի քանի խօսք Հընդկաստանի սովի առիթով. Կրետէ.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Լեռնցիները.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՏ ՆՇԱՆ Է

—

Պարսկաստանի մայրաքաղաքից ստացված հեռագիրը, որ տպագրվում է այսօր, ակամայ իր վրա է դարձնում մեր ուշադրութիւնը: Պարսից կառավարութեան առաջին մինիստրը, Սադրազամը, հրաժարական տուաց. նրա հրաժարականն ընդունվեց Շահի կողմից, և արդէն կազմված է նոր մինիստրութիւն, որ ասել է, թէ Սադրազամի հետ միասին նրա կողմնակից միւս մինիստրներն էլ հեռացրված են պաշտօնից, և պաշտօնի են կանչված նոր մարդիկ, ի միջի այլոց շահի հօրեղբայրը՝ Աբբաս-Միրզա-Մուլքարա, որը նշանակված է արտաքին գործերի մինիստր:

Սադրազամի հրաժարվելը մի քաղաքական փոփոխութեան նախանշան է, և էնց այդ է պատճառը, որ մենք այդ փոփոխութիւնը համարում ենք վատ նշան: Ցայտնի է, որ նոր հրաժարված Սադրազամը՝ վերին աստիճանի եռանդոտ, գործող, համարձակ և համակրելի մի անձնաւորութիւն է, և Պարսկաստանը նրան է պարտական իր թէ ներքին և թէ արտաքին քաղաքական այն մի քանի համակրելի փոփոխութիւնների համար, որ տեղի ունեցան Նասր-էդդին Շահի թագաւորութեան վերջին օրերը, և այժմեան Շահի գահակալութեան առաջին ամիսները: Սադրազամի առաջին ձգտումն էր եւրոպական հոսանք մտցնել Իրանի թագաւորութեան մէջ, և նրա այդ ձգտման հետևանքն էր այն կատաղի կռիւը, որ նա սկսեց պարսիկ ամենահզօր հոգևորականութեան դէմ, որը և գուցէ եղել է պատճառ նրա „հրաժարականի", կամ աւելի ճիշդն ասած՝ նրա „անկման":

Մեզ համար զարմանալի չի լինի, եթէ մի այդպիսի զօրեղ մարդու անկումից յետոյ, ինչպիսին էր երիտասարդ Սադրազամը, Նասր-էդդին Շահի շնորհով այդքան բարձր աստիճանի հասած այդ պետական գործիչը, Պարսկաստանի մայրաքաղաքում սկսեն նոր քամիներ փչել... Շատ հեշտ կարող է պատահել, որ հոգևորականութիւնը ձեռք կառնի երկրի գործերի գլխաւոր ղեկավարութիւնը, և օգուտ քաղելով Մուզաֆէր-էդդին Շահի զիջող բնաւորութիւնից, առաջ կը բերէ մի նոր, բոլորովին հակառակ հոսանք այն բոլորի դէմ, ինչ որ տեղի ունէր վերջին տարիները: Զարմանալի չի լինի, օրինակ, որ նորից այժ ձեռք բերող հոգևորական դասը փոխի այն բարեկամական յարաբերութիւնը, որ վերջին տարիները հաստատված էր դէպի Պարսկաստանի քրիստոնեայ հայ ազգաբնակութիւնը, և ամեն բանի վրա նայելով միմիայն կրօնական տեսակէտից՝ Պարսկաստանի առաջադիմութիւնը յետ կը մղի տասն, քսան տարիներով...

Վերին աստիճանի ցաւալի և տխուր կը լինի յիրաւի, եթէ մեր այդ բոլոր ենթադրութիւնները արդարանան, և Սադրազամի անկումը նշանակէր հոգևորականութեան յաղթութիւն: Այսպէս թէ այնպէս, Սադրազամի հրաժարականը վատ նշան է, որովհետև դա ապացոյց է, որ Շահի պալատի մէջ չեն համակրում նրա պետական—վարչական ծրագրին և տրամադիր են հետևելու աւելի պահպանողական, կամ աւելի ճիշդ է ասել՝ յետադէմ ուղղութեան պետական գործերի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Նոյեմբերի 11-ին

Մօտ օրերս մեր գաւառի հայ-վրացական բարալէթ գիւղում կատարվեց մի համեստ ժողովրական մարդիկ բակերից բարձր ձայնով խօսում էին միմեանց հետ: Շատ պարզ էր երևում, որ ջրաղացների աւերումը ընդհանուր վիշտ է պատճառել: Եւ դա հասկանալի էր. ամբողջ Խուլթին ալիւր տալիս էին Եղուարդի ջրաղացները: Շատերը յայտնեցին, որ առաւօտեան կը գնան դժբաղդութեան տեղը:

Մկօն Խուլթի ամենալաւ վարպետն էր: Միւս օրը առաւօտեան նա, դժուարութեամբ համնելով Եղուարդ, գտաւ այնտեղ մի մեծ բազմութիւն: Շատ մարդիկ էին հաւաքվել և չրջակայ գիւղերից: Ամենքը սպասում էին նրա վճռին:

Ջրաղացների ձորում դրութիւնը յուսահատական էր: Գետը մեծացել էր, կատաղել. ջրաղացների տեղն էր միայն երևում: Մի ջրաղացպան խեղդվել էր ջրի մէջ:

Մկօն նայեց, գլուխը ծանր կերպով շարժեց: Ցանուտէր Եղօն, որ այդ ժամին աչք չէր հեռացնում նրանից, ասաց.

—Ինչ և լինի... մեր կանանց և երեխաների համար խնայել չը կայ:

Այն ժամանակ վարպետը յայտնեց, որ անհնարին բան չի լինի աշխարհիս վրա: Նա յետ ծալեց թևքերը, առաջ անցաւ և կանչեց.

—Մարդ բերէք:

Խուլթը միաբան, ընկերովի գործի կպաւ: Մի մասը սկսեց կարգի բերել փչացած առուն, մի մասը անտառ գնաց փայտ ու գերան կտրելու: Ցեխը խոր էր, չէր թոյլ տալիս ազատ շարժվել: Եղօն և միւս գիւղերի ծերերն էլ անգործ չը մնացին: Ջրաղացների ամբողջ ձորը ներկայացնում էր մի կատաղի հացի համար սկսած կռիւ դաշտ: Գետը ոռնում էր, մռնչում, իսկ մարդիկ մրջիւնների նման դէս ու դէն էին ընկնում, աշխատում էին ընկճել, կարգի բերել նրան, որպէս զի սարեցու դատարկ պարկը ալիւրոտ դառնայ:

Կէսօրից անց էր, երբ ցածրից մի մարդ, քարից քար ցատկելով, հարիւր ու մի տեղ ճանապարհ որոնելով, եկաւ հասաւ աշխատութիւնների տեղը: Նա նախ ընկաւ մի աղբիւրի վրա, ջուր խմեց, ապա գտնելով Եղօին, կանգնեց նրա մօտ և ծնօտը դնելով իր ահագին մահակի ծայրին, լուռ ու անշարժ կանգնեց:

Եղօն մի քանի անգամ նայեց նրան, նշաններով հասկացրեց, որ անգործ մնալը մեղք է: Բայց նա չէր հասկանում:

—Խուլթեցի չես, հարցրեց նա:

—Եղուարդցի, պատասխանեց մարդը:

—Խուլթին ջրաղաց է հարկաւոր: Թևքերդ ծալիր:

Բայց նա չը փոխեց իր դիրքը: Իսկ պատասխանի փոխարէն ասաց.

—Սարօին տարել են:

—Ի՞նչ:

—Գետը տարել է Սարօի քարը:

Եղօն լռեց, շարունակեց իր գործը: Բայց քիչ անցած՝ նա մի կողմ գցեց թին և այդ լուրը հաղորդեց ուրիշներին: Կարճ միջոցում ամենքը գիտէին, որ այդպիսի բան է պատահել: Եւ ամենքի վրա էլ մի և նոյն կերպով էր ազդում լսածը. սկզբում լուրը կարծես ոչինչ տպաւորութիւն չէր գործում, բայց յետոյ հարկադրում էր դէն դնել գործիքները: Աշխատութիւնը թուլացաւ, ինչպէս ասում են, պառաւեց: Մկօն այլ ևս կրակի նման դէս ու դէն չէր ընկնում, հրամաններ չէր տալիս: Եւ վերջապէս ամենքը հրապատակվելով մի ինչ որ ծածուկ ու լուռ հրամանի, միասին գնացին դէպի ցած:

ԼԵՌՆՑԻՆԵՐԸ

I

ԽՕՍՈՒՄ ԵՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ

Գ.

Մայիս ամիսն էր: Արև օրերը հրաչք էին տարածում կանաչ սարերի վրա. բայց նրանց չուտով փախցրին գարնանային կապարեայ ամպերը: Երկար ժամանակ ամպերը պոկ չեկան երկնքի երեսից. տեղում էր անձրև կարճ, անընկատելի ընդհատումներով, տեղում էր օր ու գիշեր: Այդպէս անցաւ կէս ամիս: Նոյն իսկ սարեցին, որ ծնվում և մեռնում է խոնաւութեան մէջ, չափազանց էր համարում այդ ջրհեղեղը:

Արդէն երեք անգամ գիւղերը մթնելու վրա հաւաքվել էին եկեղեցիներում, ծունկ չոքած արտասվել էին, որ երկինքը խղճայ: Բայց ամպերի հաստ չերտերը վաղուց էին խլել երկինքը և չէին թոյլ տալիս, որ նա տեսնէ ու լսէ: Եւ որտոցը ահեղ թնդիւններով ղղրդացնում էր Խուլթի լեռները, իսկ կայծակները անխնայ ակօսում էին ժայռերի կուրծքը: Կատաղի վտակներ էին վազում ամեն կողմով, քարուքանդ էին անում լանջերը, ձորերը. մարդկանց կածանները չնչվել էին: Սարը կատաղի կերպով ինքն իրան ճոթռատում էր, իր անկարգութիւնների վրա նոր-նոր անկարգութիւններ էր աւելացնում:

Այդ աւերումների, այդ արհաւիրքների մէջ միայն սարեցու տունն էր, որ արծուի բոյնի նման կպել էր լանջերին, ջրողող էր դառնում. բայց կանգնած էր հաստատ: Խուլթեցին բանտարկված էր այդ բոյնի մէջ: Նա անդադար նայում էր իր երդիկին և տեսնում էր միայն անշարժ ամպեր: Տներում պակասել էին պաշարները. իսկ հաց այլ ևս չէր ճարվում, որովհետև ալիւր չը կար: Կորեկն ու գարին կամ եփում էին կամ աղանձ էին անում ու այդպէս ուտում: Եւ որքան էլ չարքաշ լինէր սարի մարդու ապրուստը, այնու ամենայնիւ հացի կարօտը սաստիկ էր: Դա էլ մի տեսակ սով էր, այդ էր հասկացնում երեխաների լացը: Իսկ անձրևը գալիս էր ու գալիս:

Մի երեկոյ տեղի ունեցաւ հրաչքը: Խուլթեցին պատրաստվում էր քնել, յոյսը միւս օրվան թողնելով, երբ յանկարծ հները սկսեցին հաչել: Ամենքը դուրս թափվեցան: Երկինքը պարզել էր, իսկ Մարաթուկի սարի կողմից բարձրանում էր բոլորակ լուսինը: Գիւղերը սթափվեցան, կարծես ծանր քունը դէն գցեցին: Մարդիկ միմեանց ձայն տուեցին, և այդ անսովոր ժամին տարածվեց ցերեկվայ գիւղական աղմուկը:

Այդ աղմուկի մէջ Շէն գիւղի մարդիկ չուտ չը լսեցին մի մարդու ձայն, որ գալիս էր գիւղի վերևում ցցված ժայռերի գլխից: Նա կանչում էր մէկին, որի անունն էր Մկօ: Եւ երբ, վերջապէս, գիւղից պատասխանեցին, կանչողը յայտնեց, որ ինքը չէ կարողանում գիւղ իջնել, որովհետև իր առջևում այլ ևս ճանապարհ չը կայ:

Մկօն, մի կաղլիկ և կարճլիկ մարդ, ձայն տուեց: Վերից լսվեց.

—Ցանուտէր Եղօն ասաց, որ առաւօտը դաս Եղուարդ:

—Բարի լինի, պատասխանեց Մկօն:

—Ի՞նչ բարի... Գետը քշել է բոլոր ջրաղացները, ոչինչ չէ թողել: Խուլթում սով կը սկսվի, եթէ ճար չը լինի:

Այս խօսակցութիւնը կատարվեց չատ բարձր ձայնով. հաղիւ էին միմեանց լսում և հասկանում: Ամեն տեղ դեռ ծլծլում էին ջրերը, իսկ չրջակայ ձորերը ղղրդում էին կատաղած վտակների ձայնից: Մկօն իր համաձայնութիւնը յայտնեց: Այնուհետև մի քանի տեղերից հարց ու փորձ արին լուր բերողին: Տեղեկութիւն էին ուզում դրսի աշխարհի մասին. և պատասխանն այն էր, որ աշխարհը քանդվել է:

Բայց և այդպէս, սքանչելի էր լուսինը: Եւ դեռ երկար ժամանակ մարդիկ բակերից բարձր ձայնով խօսում էին միմեանց հետ: Շատ պարզ էր երևում, որ ջրաղացների աւերումը ընդհանուր վիշտ է պատճառել: Եւ դա հասկանալի էր. ամբողջ Խուլթին ալիւր տալիս էին Եղուարդի ջրաղացները: Շատերը յայտնեցին, որ առաւօտեան կը գնան դժբաղդութեան տեղը:

Մկօն Խուլթի ամենալաւ վարպետն էր: Միւս օրը առաւօտեան նա, դժուարութեամբ համնելով Եղուարդ, գտաւ այնտեղ մի մեծ բազմութիւն: Շատ մարդիկ էին հաւաքվել և չրջակայ գիւղերից: Ամենքը սպասում էին նրա վճռին:

Ջրաղացների ձորում դրութիւնը յուսահատական էր: Գետը մեծացել էր, կատաղել. ջրաղացների տեղն էր միայն երևում: Մի ջրաղացպան խեղդվել էր ջրի մէջ:

Մկօն նայեց, գլուխը ծանր կերպով շարժեց: Ցանուտէր Եղօն, որ այդ ժամին աչք չէր հեռացնում նրանից, ասաց.

—Ինչ և լինի... մեր կանանց և երեխաների համար խնայել չը կայ:

Այն ժամանակ վարպետը յայտնեց, որ անհնարին բան չի լինի աշխարհիս վրա: Նա յետ ծալեց թևքերը, առաջ անցաւ և կանչեց.

—Մարդ բերէք:

Խուլթը միաբան, ընկերովի գործի կպաւ: Մի մասը սկսեց կարգի բերել փչացած առուն, մի մասը անտառ գնաց փայտ ու գերան կտրելու: Ցեխը խոր էր, չէր թոյլ տալիս ազատ շարժվել: Եղօն և միւս գիւղերի ծերերն էլ անգործ չը մնացին: Ջրաղացների ամբողջ ձորը ներկայացնում էր մի կատաղի հացի համար սկսած կռիւ դաշտ: Գետը ոռնում էր, մռնչում, իսկ մարդիկ մրջիւնների նման դէս ու դէն էին ընկնում, աշխատում էին ընկճել, կարգի բերել նրան, որպէս զի սարեցու դատարկ պարկը ալիւրոտ դառնայ:

Կէսօրից անց էր, երբ ցածրից մի մարդ, քարից քար ցատկելով, հարիւր ու մի տեղ ճանապարհ որոնելով, եկաւ հասաւ աշխատութիւնների տեղը: Նա նախ ընկաւ մի աղբիւրի վրա, ջուր խմեց, ապա գտնելով Եղօին, կանգնեց նրա մօտ և ծնօտը դնելով իր ահագին մահակի ծայրին, լուռ ու անշարժ կանգնեց:

Եղօն մի քանի անգամ նայեց նրան, նշաններով հասկացրեց, որ անգործ մնալը մեղք է: Բայց նա չէր հասկանում:

—Խուլթեցի չես, հարցրեց նա:

—Եղուարդցի, պատասխանեց մարդը:

—Խուլթին ջրաղաց է հարկաւոր: Թևքերդ ծալիր:

Բայց նա չը փոխեց իր դիրքը: Իսկ պատասխանի փոխարէն ասաց.

—Սարօին տարել են:

—Ի՞նչ:

—Գետը տարել է Սարօի քարը:

Եղօն լռեց, շարունակեց իր գործը: Բայց քիչ անցած՝ նա մի կողմ գցեց թին և այդ լուրը հաղորդեց ուրիշներին: Կարճ միջոցում ամենքը գիտէին, որ այդպիսի բան է պատահել: Եւ ամենքի վրա էլ մի և նոյն կերպով էր ազդում լսածը. սկզբում լուրը կարծես ոչինչ տպաւորութիւն չէր գործում, բայց յետոյ հարկադրում էր դէն դնել գործիքները: Աշխատութիւնը թուլացաւ, ինչպէս ասում են, պառաւեց: Մկօն այլ ևս կրակի նման դէս ու դէն չէր ընկնում, հրամաններ չէր տալիս: Եւ վերջապէս ամենքը հրապատակվելով մի ինչ որ ծածուկ ու լուռ հրամանի, միասին գնացին դէպի ցած:

գական հանդէս։ Դա Բարալէթի հայ-վրացական ժողովրդական ձրի գրադարան-ընթերցարանի շինութեան օրհնելու հանդէսն էր։—Հարկաւոր ենք համարում «Մշակի» ընթերցողների ուշադրութիւնը մի երկու խօսքով հրաւիրել այդ իր տեսակի մէջ բացառիկ և, հաւանական է, Կովկասում առաջինը եղող գրադարան-ընթերցարանի և տեղի ունեցած հանդիսի վրա։

Դուցէ Ախալքալաքից դուրս ոչ ոք չը գիտէ, որ մեր քաղաքում՝ նահանգապետից հաստատված կանոնադրութեամբ՝ գոյութիւն ունի որքան համեստ՝ նոյնքան և համակրելի մի ընկերութիւն, որ կրում է «Բարալէթի ձրի գրադարան-ընթերցարանի ընկերութիւն» անունը և որը ներկայումս բաղկացած է 57 հայ, վրացի և ռուս անդամներից, որոնց թւում կան տիկիններ, քահանաներ, ուսուցիչներ, ուրիշ ծառայողներ, քաղաքացիներ, կալուածատէրեր, հասարակ գիւղացիներ։ Ընկերութիւնը իր այդ գեղեցիկ հիմնարկութիւնը բացել է դեռ անցեալ 1895 թւի փետրվարին, բայց սեփական շինութիւն չէ ունեցել, որ և կառուցվել է այս ամառը նուիրատուութիւններով և անդամակցական վճարներով։ Հարկաւոր ենք համարում յիշել, որ ընթերցարանի բացվելուն և շինութեան գլուխ բերելուն շատ են նպաստել պ. պ. Ալխազով և Մուրժիկնելի։

Ահա այդ շինութեան օրհնելու հանդէսն էր, որ կատարվեց։ Սկզբից՝ ընկերութեան անդամների, քաղաքից եկած հիւրերի և բազմաթիւ գիւղացիների ներկայութեամբ պ. նախագահը, ներկայումս գաւառապետ իշխան Թարխան-Մօուրաւով, ռուսերէն կարդաց մուտքի և ելքի մանրամասն հաշիւը, որ բացատրութիւններով միասին թարգմանվում էր հայերէն։ Այդ հաշուից երևայ հետևեալը. երկու սենեակից և մի նախասենակից բաղկացած բաւական յարմար շինութեան վրա ծախվել է ընդամենը մօտ 400 ր., ներկայումս գրադարանում կայ մօտ 200 հատոր հայերէն և վրացերէն, մեծ մասամբ նուիրած, գրքեր. առ այժմ ընթերցարանում ձրի ստացվում են «Новое Обозрѣніе» և «Մշակ», իսկ առաջ ստացվում էր և «Իվերիա». մինչև այժմ գլխաւորապէս ուշադրութիւն էր դարձրած շինութեան վրա, իսկ այսուհետև լուրջ ուշադրութիւն կը դարձնվի գրքերի և պարբերական հրատարակութիւնների վրա և այլն։ Հաշուետուութիւնից յետոյ մաղթանք կատարեցին նախ վրացի քահանան և ապա Ախալքալաքի գաւառի երկրորդ բաժնի հայ գործակալն ու տեղական հայ քահանան։ Մաղթանքից յետոյ կայացաւ ընկերութեան արտակարգ նիստը՝ նախագահութեամբ իշխան Թարխան—Մօուրաւովի։ Սրտաշարժ էր տեսնել գիւղացիներին մասնակցելիս այդ նիստին՝ աստիճանաւորների և կալուածատէրերի հետ միասին, կարծիքներ յայտնելիս իրանց պարզ և անպաճոյճ լեզուով...

Այդ ժողովում գրադարանապետ ընտրվեց տեղական ուսումնարանի ուսուցիչ Ս. Գուրգենեանց և վճռվեց ընկերութեան կանոնադրութիւնը տպագրել տալ ռուսերէն, հայերէն և վրացերէն լեզուներով։ Ժողովից յետոյ ճաշ տրվեց բոլոր ներկայ եղող անդամներին և քաղաքից հրաւիրված հիւրերին։ Ճաշի սկզբին խօսվեց վրացի և հայ ժողովրդի և ինտելիգենցիայի համերաշխ գործունէութեան, ընթերցարանների ժողովրդական նշանակութեան, կառավարութեան տեղական ներկայացուցիչների լուսաւոր ինցիատիվի վերաբերմամբ, ինչպիսին ներկայ դէպքումն է. ցանկութիւն յայտնվեց, որ պ. գաւառապետը նպաստէ նոյնանման ընթերցարանների բացվելուն նաև գաւառի մի քանի՝ ընթերցանութեան աւելի կարիք ունեցող և Բարալէթից աւելի մեծ գիւղերում, ինչպէս կարդախ ամենամեծ գիւղն է (300 տուն), Գանձան, Սաթխան, Գեօնդիւրան, հայ կաթոլիկների Աւլատան գիւղը, որ ընթերցողների ահագին կոնտինգենտ կարող է տալ (քիչ ալատանցի կը պատահի, որ մի քանի տարիներ Կ. Պոլսում ապրած և գրագիտութիւն սովորած չը լինի. ներկայումս էլ, ինչպէս հաստատ տեղեկացանք, Ալատանից 65 հոգի կայ Կ. Պոլսում)։

Ահա ձեզ մի խրատական երևոյթ. թող թիֆլիսի ինտելիգենցիան ուշադրութիւն դարձնէ այս համակրելի ձեռնարկութեան վրա և օգնութեան գայ Ախալքալաքի գաւառական երիտասարդութեան՝ ընթերցարաններ բանալ այս հայաշատ գաւառում։

Ի դէպ. Բարալէթը, ուր մնում է գաւառական պրիստաւներից մէկը, Ախալքալաքի գաւառի միջակ մեծութեամբ գիւղերից մէկն է (100—120 տուն), քաղաքից մօտ 18 վերստ հեռաւորութեան վրա, և ունի երկդասեան պետական դպրոց՝ պանսիօնով, օրիորդաց բաժնով և փառաւոր շինութիւնով, հիւանդանոց (пріемный покой) և ընթերցարան, որոնք իրանց գոյութեամբ ամբողջովին պարտական են գաւառապետ իշխ. Թարխան-Մօուրաւովի լուսաւոր ինիցիատիվին։ Ցանկալի է, որ յարգելի իշխանը անտէս չանէ և վերև յիշած աւելի կարևոր ու բազմամարդ գիւղերը։

Զ. Տ-Գ.

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 7-ին

Հոկտեմբեր ամսի սկզբից մինչև այժմ անդադար գաղթականներ են գալիս մեր քաղաքը և ապա ցրվում գիւղեր կամ դիմում ուղղակի դէպի Էջմիածին։ Թիւրքաց-Հայաստանից, հազար ու մի փորձանքի ենթարկվելով, քրիստոնեայ ազգաբնակութեան խղճուկ մնացորդը մի կերպ անցնում է սահմանը և Պարսկաստանի վրայով գիմում դէպի Անդրկովկաս։ Նրանք գալիս են տաճնեակներով, նոյն իսկ հարիւրներով, գլխաւորապէս Վանից, իսկ փոքրամասնութիւնը Գաւառ և Աղբակ անուանված տեղերից, ինչպէս իրանք են ասում։ Հոկտեմբեր ամսին եկած քրիստոնեայ գաղթականները համարեա բոլորն էլ «Եաղուբիներ» (Յակովբեան) էին. նրանց մէջ 40—50 հոգու վրա հազիւ 1—3 հոգի հայ կամ աորի էր լինում։ Իսկ այժմ, ամսիս 6-ին, եկել են 50—60 հոգի մեծ ու փոքր, երկու սեռի զուտ հայ գաղթականներ, որոնք ապաստանվել են նախկին հայոց դպրոցների չինութեան մէջ։

Սրանց նկարագրութիւնը մի և նոյնն է, ինչ որ նկարագրված է լրագիրներում լոյս տեսած թղթակցութիւնների մէջ։ Չէ կարելի տեսնել սրանց աղիողորմ դրութիւնը և չարտասվել։ Դեռ նոր լոյսը բացված, գաղթական գեղջուկ ծերունին, փաթաթված իր լաթոտ աբայով, բռնած իր թոռնիկների ձեռքերից բաղկում է նախիջևանցիների դռները և մի կտոր հաց աղերսում. նրա հագին կօշիկ չը կայ, կիսամաշ գուլպաներից կրունկն ու ոտի մատներն երևում են, նրա թոռնիկները, կապտած լուսաբացի կարող ցրտից, մերկ անդամները և ոտները բարձր ու ցածր են անում, և փոքրիկ ձեռները մօտեցնում բերաններին գոլորշիով տաքացնելու համար։ Նրանց մերկութիւնը ծածկող միմիայն մի հատիկ շապիկը քանի տեղից կարկատած է և էլի տասը տեղից, նրա միջով, երևում է բաց մարմինը։ Սակայն քաղցը ստիպել է դուրս գալ փողոց։ «Ցուրտ և քաղց», ահա գաղթականների միակ բաժինը։ Որը հաց, որը հին և նոր հագուստեղէն բերում բաժանում են այս թշուառներին. քաղաքացիներից ոմանք մի մի փոքրիկ աղջիկներ են վերցնում որպէս աղախիններ։

Ամսիս սկզբին պատահեցինք փողոցում մի խումբ եաղուբիների, որոնք բոլորն էլ տղամարդիկ էին։ Մեր հարցին, թէ ինչու նրանց հետ կանայք և երեխաներ չը կան, նրանք պատասխանեցին կոտրատած հայերէն լեզուով՝ «Մի պարսկական անցագիր հանելը 4—6 ռուբլի է պահանջում, մեզ համար փող հաւաքեցին ինգլիզի վարժապետները, որով կարողացանք միայն մեզ համար անցագիրներ հանել, իսկ կանայք, ճժեր, բժեր բոլորը թողինք Պարսկաստան...» Մի ուրիշ անգամ մի եաղուբու հարցրինք՝ ինչու եկաք, ինչու մի կերպ չը մնացիք ձեր երկրում։ Ցոյց տալով մօտակայ գետակը, նա պատասխանեց՝ «Քրիստոնեաների արիւնը Ցաճկաստանում հոսում է, ինչպէս այս գետակը, էլ ճար կար մնալու...»

Ս. Դ.

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԴԻՑ

—

Նոյեմբերի 8-ին

Հայաստանցի ողորմելի գաղթականների ծայրը այստեղ էլ հասաւ։ Մարդ կամ ինքը պէտք է մերկ ու քաղցած լինի, կամ իր աչքով տեսնի, որ կարողանայ երևակայել այդ խղճալի փախստականների վիճակը։ Զարհուրելի ու խիստ սրբտաճմլիկ տեսարան է ներկայացնում այդ գաղթականների տեսքը։ Մերկ, տաբատիկ, քաղցած. փողոցներում թափառում են մի քանի ընտանիքներ ու սրան ու նրան դիմելով «կտոր մը հաց» մուրում։ Որքան աղեխարշ է այն տեսարանը, երբ մայրը իր երեխայի մերկ մարմինը ցրտից պատսպարելու համար աշխատում է իր ցնցոտիներով ծածկել նրան, սակայն տեսնելով որ այդ ևս չէ օգնում, սկսում է իր դալկացած չըթունքներով իր անբաղդի ցրտից կապտած երեսը համբոյրներով ծածկել։ Ի՜նչ սիրտանք է... Մեր Ասխաբադի ունեորները, իրանց եսից դրդված, տաճնեակներով հեռագրի են տալիս քահանայական հարցի համար, բայց այդ տեսարանը կամ չեն տեսնում, կամ չեն ուզում տեսնել։ Ապա ով պէտք է այս խեղճերի մասին մտածէ. չէ՞ որ ձմեռը այսօր կամ վաղը իր դաժան ցրտերով վրա կը հասնի։

Հոկտեմբերի 28-ին մեր գործակատարները ներկայան և խնդրեցին երկրի կառավարչին կիրակնօրեայ հանգստութեան համար կարգադրութիւն անել։ Պէտք է յիշել, որ գործակատարները սրանից երկու տարի առաջ էլի դիմել էին նոյն խնդիրքով։ Լսելով գործակատարների խնդիրքը, կառավարիչը հրամայեց գաւառապետին, որ սա կանչէ վակառականներին ու նրանց կարծիքն իմանայ այդ մասին։ Պ. գաւառապետը կանչեց իր մօտ բոլոր վաճառականներին։ Վաճառականների մի մասը, ինչպէս երևում է, բարւոք էր համարել չը ներկայանալ գաւառապետին. միայն 30 հոգի էին գնացել, որոնց հարց ու փորձ անելուց յետոյ, ձայների մեծամասնութիւնով։ Վարժ ձեռքը չը վրիպեց նպատակից. քարն ընկաւ նշանակած տեղը։ Երևի փորձը հաստատեց նրա ենթադրութիւնը։ Ուստի երեսը դարձրեց դէպի մարդիկ և, ինչպէս հարազատ խութեցի, ասաց.

—Քահանան խոստովանքը բաց արաւ, պատմեց ամենքին, որպէս զի խութը ճանաչէ իր ամօթը։ Եթէ գեսը տարած էլ լինի նրան, մենք պիտի գտնենք նորից։

Եւ նա բացատրեց իր միտքը։—Այդ անսովոր տեսարանի գաղտնիքն այն էր, որ գեսը այլ ևս չէ կարողանում մտնել իր խուռչը ու ցած գնալ այն տեղով, որովհետև ջրի բերած մեծ քարը խրվել, պնդացել է խուռչի բերանում։ Եթէ բերանը բացվի, հոսանքը կանոնաւոր կը լինի և այն ժամանակ հեշտ է իմանալ՝ Սարօն իր տեղն է թէ ոչ։

Ունկնդիրները շատ բան չը հասկացան վարպետի մասնագիտական բացատրութիւններից։ Բայց խօսքերի փոխարէն Մկոի դէմքն էր ցոյց տալիս, որ յոյս կայ։ Եղօն, որ ամենից լաւ էր հասկանում այդ դէմքը, բացականչեց.

—Աստուածածինը մեզ չի թողնի, տղերք։ Մկօն ասում է և կանի։

Շատերը երեսներին խաչ հանեցին, շատերը կանչեցին Մարթուկի սուրբ Աստուածածնին։ Իսկ այդ ժամանակ Մկօն, որ լաւ ուսումնասիրել էր թէ ինչ պէտք է անել՝ նպատակին հասնելու համար, հասկացնում էր որ գեսը կանոնաւորելը ջրաղաց չինել չէ։ Պէտք է բան տեսնել գեսի մէջ. իսկ նա արիւն է, նրա համար մարդ կամ ժայռ տանելը մի և նոյն է թէ մի չիւղ տանել։ Սակայն ոչ ոք չը վախեց. մարդու համար դժուարը այն է, որ իմացվի թէ կարելի է գործը գլուխ բերել. այնուհետև Աստուածու կամքն է մնում։

Մկօի ծրագիրը ընդունվեց։ Մնում էր վճռել թէ երբ սկսել։ Ո՞րն էր աւելի հարկաւորը. ջրաղացը, թէ Սարօի գերեզմանը։

Այդ մասին խորհուրդը երկար չը տևեց։ խութեցիների մէջ շատ քիչ էին այնպիսիները, որոնք համարձակութիւն ունեցան յայտնելու թէ առաջ փորը պէտք է կշտացնել։ Դրանք երեքչորս հոգի էին։ Դուցէ նրանք էլ ուրիշ կերպ խօսէին, եթէ եղօն, ծերերը և ամենից յետոյ Մկօն հէնց սկզբից բացած լինէին իրանց բերանը։

—Ջրաղաց միշտ կունենանք, բայց Սարօն մի հատ է, ասաց Եղօն։—Ո՞վ գիտէ, դուցէ գեսը էգուց պիտի պոկէ ու տանէ նրան։

—Արդար խօսք է, վրա բերեց մի ծերունի. —փարի գործը հեշտ է։ խութեցին մի քանի օր էլ կարող է դիմանալ։ Այնպէս գնենք թէ երէկ երկինքը չէ բացվել և դեռ մի շաբաթ էլ անձրևը պիտի ծեծէ մեզ։

—Շատ էլ դժուար չէր մեր օրը, խօսեց մի ուրիշը.—կորեկն ու գարին, փառք Աստուծու, բաւական կան. ճշմարիտ է, եփած կամ աղանձած շատ անհամ է և երեխաները լացով ու դժուարութեամբ են ուտում... Բայց ես դեռ չեմ տեսել մի երեխայ, որ շատ լաց լինելուց մեռած լինէր։

—Համն էլ ոչինչ, շարունակեց այս անգամ մի երիտասարդ մարդ—հրէն արևը չորացնում է հողը. կանաչներ ու բանջար շատ կայ մեր սարերում. շատ համեղ են և գտնելն էլ դժուար չէ։

Այս մտքով մի քանիսներն էլ խօսեցին։ Իսկ Մկօն ասաց.

—Առանց խելքի վարպետութիւն չի լինի։ Ես ջրաղացը գլխի վայր կը չինեմ, եթէ խելքս տեղը չը լինի. իսկ խելքս իր տեղը կը լինի այն ժամանակ, երբ այստեղ կը վերջացնենք։

Քահանան խոստովանքը բաց արաւ... Մենք հացի մասին պէտք է մտածենք կանանց նման։

Արևը արդէն մայր էր մտել, երբ խութեցիները իջնում էին Վարդանի-կալից։ Նրանց դիմաւորում էր լուսինը սարի վրայից։ Ամենքը խաչ հանեցին իրանց երեսներին. տարածվեց մի ընդհանուր մրմունջ։

—Ողորմութիւնդ լինի խութի վրա...

Նոյն երեկոյեան գիւղերում խօսակցութեան նիւթը Եղուարդի գեսն էր։ Հարցնում էին ջրաղացների մասին, բայց լսում էին ուրիշ պատմութիւն։ Ցրտունջ յայտնող չը կար. այնքան շատ են սարեցիները հասկանում իրանց ցաւը։ Մայրերը երեխաներին ասում էին.

—Աստուծու ողորմութիւնը լինի, հաց էլ կուտենանք։

Նորից կաթսաները դրվեցան կասկարաների վրա՝ կորկոտ ու կորեկ եփելու համար։ Իսկ թառուկ գիւղի կանայք, երբ քնացրին երեխաներին, գնացին երէցի մօտ և խնդրեցին, որ եկեղեցու կանթեղը վառէ։ Նրանք, չքաղաքացի սեղանի առաջ, ուխտ էին անում և աղաչում էին կուրծք ծեծելով, որ միւս օրը Մկօի և բոլոր խութեցիների գործը աջողվի։

Անցաւ երկու օր։ Վարդանի-կալի հարաւային ստորոտի մօտ աշխատանքը եռ էր գալիս։ Մկօն հրաչքներ էր գործում. կիսամերկ մարդիկ դէս ու դէն էին գնում գեսի մէջ և իրանց աղաղակներով խլացնում էին ջրի գոռոցները։ Աշխատում էին և ժայռոտ ափերի վրա։ Ծմակից մեծ քանակութեամբ հաստ ճողեր ու գերաններ էին բերել. իսկ կատաղի հոսանքի մէջ մարդկանց պահելու համար երկար չուաններ էին կապել ամեն մէկի մէջքից և նրանց միւս ծայրը պինդ պահում էին ափին կանգնած և նստած մարդիկ։ Բայց Մկօն, որ մինչև այդ հարիւր անթափվում։ Վարժ ձեռքը չը վրիպեց նպատակից. քարն ընկաւ նշանակած տեղը։ Երևի փորձը հաստատեց նրա ենթադրութիւնը։ Ուստի երեսը դարձրեց դէպի մարդիկ և, ինչպէս հարազատ խութեցի, ասաց.

—Քահանան խոստովանքը բաց արաւ, պատմեց ամենքին, որպէս զի խութը ճանաչէ իր ամօթը։ Եթէ գեսը տարած էլ լինի նրան, մենք պիտի գտնենք նորից։

Եւ նա բացատրեց իր միտքը։—Այդ անսովոր տեսարանի գաղտնիքն այն էր, որ գեսը այլ ևս չէ կարողանում մտնել իր խուռչը ու ցած գնալ այն տեղով, որովհետև ջրի բերած մեծ քարը խրվել, պնդացել է խուռչի բերանում։ Եթէ բերանը բացվի, հոսանքը կանոնաւոր կը լինի և այն ժամանակ հեշտ է իմանալ՝ Սարօն իր տեղն է թէ ոչ։

Ունկնդիրները շատ բան չը հասկացան վարպետի մասնագիտական բացատրութիւններից։ Բայց խօսքերի փոխարէն Մկօի դէմքն էր ցոյց տալիս, որ յոյս կայ։ Եղօն, որ ամենից լաւ էր հասկանում այդ դէմքը, բացականչեց.

—Աստուածածինը մեզ չի թողնի, տղերք։ Մկօն ասում է և կանի։

Շատերը երեսներին խաչ հանեցին, շատերը կանչեցին Մարթուկի սուրբ Աստուածածնին։ Իսկ այդ ժամանակ Մկօն, որ լաւ ուսումնասիրել էր թէ ինչ պէտք է անել՝ նպատակին հասնելու համար, հասկացնում էր որ գեսը կանոնաւորելը ջրաղաց չինել չէ։ Պէտք է բան տեսնել գեսի մէջ. իսկ նա արիւն է, նրա համար մարդ կամ ժայռ տանելը մի և նոյն է թէ մի չիւղ տանել։ Սակայն ոչ ոք չը վախեց. մարդու համար դժուարը այն է, որ իմացվի թէ կարելի է գործը գլուխ բերել. այնուհետև Աստուածու կամքն է մնում։

Վարդանի-կալը հազիւ կարողացաւ տեղաւորել այդքան մարդկանց։ Իսկ այն տեսարանը, որ նա ցոյց էր տալիս այժմ, ահ պատճառեց ամենքին։ Կատաղած գեսը այլ ևս սովորական ճանապարհ չէր ճանաչում։ Նա ժայռերի գլխից ուղղակի ցած էր նետվում և իր ճայնը երկինք էր հանում։ Նա փչրել, ջարդել էր բոլոր ծառերը, որոնք առաջ խոնարհված էին խուռչի մէջ ծածկված ջրվէժի վրա։ Իսկ այնտեղ, ուր առաջ սպիտակ գերեզմանն էր, այժմ ջրի ահռելի սիւներ էին թափվում և մոլեգնաբար պարում։

Խութեցիները լուռ էին։ Երևում էր մարդը, որ վիզ է ճկում բնութեան արհաւիրքների առաջ, զգալով որ ինքը բոլորովին անզօր է, բոլորովին խեղճ։ Միայն կաղ Մկօն էր, որ մի-մի մօտենում էր կալի ծայրին, դիտում էր թէ ինչպէս են ջրերը գահավիժվում և երբեմն գլխի մեղմ շարժումներով հաւանութեան նշաններ էր անում։

Վերջապէս, ճայն հանեց Եղօն։

—Մեր ամօթը կորել է, տղերք, ասաց նա։—Ի՞նչ կը լինի խութի դրութիւնը։

Մի ծերունի հաստատեց այդ խօսքերը և աւելացրեց.

—Ցաւն այն է, որ այդ բանը մի ուրիշ տարի չը պատահեց։ Ցեսնում էք, այնքան միայն քիչ կորեկ կունենանք։ Իսկ ամառնամուտին կը դան հարկ ստանալու։ Մեր ցաւը ինչ ցաւ կը լինի, եթէ Վարդանի-կալում ունեցած չունեցածը տալուց յետոյ նայենք դէպի ցած և չը տեսնենք Սարօին։

Մի ուրիշը աւելի վհատութիւն տարածեց։

—Եւ մեր որդիները կը սովորեն ու կապրեն կորած, մոռացած ամօթով, ասաց նա։

Այդ միջոցին Մկօն մի կտոր քար պոկեց և գցեց դէպի այն կողմը, ուր գեսը ցած էր թափվում։ Վարժ ձեռքը չը վրիպեց նպատակից. քարն ընկաւ նշանակած տեղը։ Երևի փորձը հաստատեց նրա ենթադրութիւնը։ Ուստի երեսը դարձրեց դէպի մարդիկ և, ինչպէս հարազատ խութեցի, ասաց.

—Քահանան խոստովանքը բաց արաւ, պատմեց ամենքին, որպէս զի խութը ճանաչէ իր ամօթը։ Եթէ գեսը տարած էլ լինի նրան, մենք պիտի գտնենք նորից։

Եւ նա բացատրեց իր միտքը։—Այդ անսովոր տեսարանի գաղտնիքն այն էր, որ գեսը այլ ևս չէ կարողանում մտնել իր խուռչը ու ցած գնալ այն տեղով, որովհետև ջրի բերած մեծ քարը խրվել, պնդացել է խուռչի բերանում։ Եթէ բերանը բացվի, հոսանքը կանոնաւոր կը լինի և այն ժամանակ հեշտ է իմանալ՝ Սարօն իր տեղն է թէ ոչ։

Ունկնդիրները շատ բան չը հասկացան վարպետի մասնագիտական բացատրութիւններից։ Բայց խօսքերի փոխարէն Մկօի դէմքն էր ցոյց տալիս, որ յոյս կայ։ Եղօն, որ ամենից լաւ էր հասկանում այդ դէմքը, բացականչեց.

—Աստուածածինը մեզ չի թողնի, տղերք։ Մկօն ասում է և կանի։

Շատերը երեսներին խաչ հանեցին, շատերը կանչեցին Մարթուկի սուրբ Աստուածածնին։ Իսկ այդ ժամանակ Մկօն, որ լաւ ուսումնասիրել էր թէ ինչ պէտք է անել՝ նպատակին հասնելու համար, հասկացնում էր որ գեսը կանոնաւորելը ջրաղաց չինել չէ։ Պէտք է բան տեսնել գեսի մէջ. իսկ նա արիւն է, նրա համար մարդ կամ ժայռ տանելը մի և նոյն է թէ մի չիւղ տանել։ Սակայն ոչ ոք չը վախեց. մարդու համար դժուարը այն է, որ իմացվի թէ կարելի է գործը գլուխ բերել. այնուհետև Աստուածու կամքն է մնում։

թեամբ, 25 ձայնով ընդդէմ 5-ի, վճռվեց, որ կիրակի օրերը խանութները բոլորովին փակեն: Այս կողմից գովասանքի արժանի է «Անդրկասպեան ընկերութեան» կառավարչի եռանդը, որ նախօրօք աշխատում էր վաճառականներին համոզել յօգուտ գործակատարների: Որքան գովելի էր մի քանի վաճառականների արածը, նոյնքան և պախարակելի էր միւսների հակառակութիւնը, որոնց միակ նպատակն է իրանց ծառայողին որքան կարելի է շատ չահագործել: Ցեսնենք, արդեօք գործակատարները կարող կը լինեն իրանց չնորհած ազատութիւնից օգտվել:

Փ.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Նոյեմբերի 8-ին

Այսօր դաւառական վարչութիւնը պաշտօնապէս յայտարարեց, որ Երևանի պ. նահանգապետը կարդադրել է, որպէս զի մեր քաղաքի ընտրողները, նոյեմբերի 24-ին ընտրեն քաղաքային ձայնաւորներ: Ուրեմն, վաղուց ցանկացած միտքը իրականութիւն կը դառնայ և մեր քաղաքը կունենայ իր քաղաքային Դուման, իր ինքնավարութիւնը:

Ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ լցվեցին հայաստանցի թշուառ գաղթականները. խեղճերը գլուխները դնելու տեղ չունեն: Ի՞նչ կը լինի դրանց վիճակը, երբ շուտով ձիւնը կը ծածկէ գետինը: Գաղթականները մեծ մասամբ ցրված են Շիրակի գիւղերում:

Երկաթուղու գծի վրա աշխատանքները դադարեցին և հազարաւոր մշակներ մնացին անգործ: Շուտով անգործութեան կը մատնվի նաև ամբողջ Շիրակի երկրագործ դասը՝ և ձմերային ամիսները կանցնեն բոլորովին պարապ: Որքան լաւ կը լիներ, եթէ կենտրոն գիւղերում հիմնվէր արհեստանոց և այդպիսով միջոց տրվէր Շիրակի երկրագործ դասին՝ փոխանակ օրերը անգործ անցկացնելու, մնայագործութեամբ զբաղվել, որ եկամուտի մի նոր աղբիւր կը դառնար ժողովրդի համար: Միայն դրանով կարելի է մի չարք չարիքների առաջն առնել:

Շիրակեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շամախի, նոյեմբերի 11-ին

Բարեհաճեցէք, խնդրեմ, ի լուր բոլորի «Մշակի» մէջ տպագրել հետեւեալը.

Լրագիրներից տեղեկանալով, որ Շամախու թեմական դպրանոցի հարցը արդէն վճռված է և Բագուում պիտի բացվի, չամախեցիները, որոնք աներկբայ էին, թէ Շամախում պիտի բացվի այդ դպրոցը, թէ հեռագրով և թէ առանձին խնդրով դիմեցին Վեհափառ Կաթողիկոսին, որ քանի ուշ չէ, փոխէ իր վճիռը, քանի որ թեմի հայերի ստուար մեծամասնութիւնը Շամախու և Գեօկչայի գաւառներումն է կենտրոնացած, և Շամախում բացվելով՝ թեմական դպրանոցը աւելի մատչելի կը լինի ամբողջ թեմի հայերին, քան Բագուում, ուր ամեն կողմից դժուարութիւններ կան:

Ն. Ս. Տէր-Մանուէլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է թերթ ու կէսից:

Երէկ գիշեր ռուսաց գործակալութեան միջոցով ստացանք հետեւեալ հեռագիրը. «Կ. Պոլիս, 15 նոյեմբերի. Հայոց նոր պատրիարքի թշնամի կուսակցութիւնը աշխատում է խանգարել նրա ընտրութեան հաստատութիւնը, յիշեցնելով, որ Օրմանեանը 10 տարի առաջ, երբ Էրզրումի առաջնորդ էր, յետ կանչվեց Կ. Պոլիս՝ կասկածելով նրան հակակառավարչական վարմունքի մէջ: Այն ժամանակ նրան աջողվեց փարատել այդ կասկածը, բայց երկիւղ են կրում, որ այդ միջոցը կը դժուարացնի պատրիարքի դրութիւնը Բ. Դրան առաջ:»

Մենք ստացանք Պարիզից հայր Շարմանի խմբագրութեամբ երկու ամիսը մի անգամ հրատարակվող «Oeuvres des Ecoles d'Oriens» զբաքոյկը: Գրքոյկի բովանդակութիւնն է. «Հայց:—Արտաքին գործերի մինիստրի նամակը հայր Շարմանին:—Կ. Պոլսի նոր կոտորածները:—Ֆրանս-ռուսական միութիւնը և հայոց հարցը:—Վանի նոր կոտորածները (ականատեսի պատմութիւն):—Ակնի կոտորածները (1896 թւի սեպտեմբերի 15-ին):—Կ. Պոլսի դրութիւնը:—Հայ որբերին որդեգրելը Ֆրանսիայում:—Նոր կրօնափոխութիւնները Սիրիայում:—Հայ փախստականները Ֆրանսիայում: Գիրքը բաղկացած է 46 երեսից:

Մեզ հաղորդում են, որ դրամատէր Ալեքսանդր Մանթաշեան՝ ստանալով Վեհափառ Կաթողիկոսից կոնդակ՝ օգնելու Էջմիածնի տպարանին, նուիրեց այդ տպարանին 1000 ռուբլի:

«Մշակի» անցեալ համարի հետ ուղարկեցինք մեր բաժանորդներին տպագրած նամակներ և ծրարներ՝ 1897 թւի բաժանորդագրութեան համար: Իսկ այս համարի հետ ուղարկում ենք այդ ծրարները և նամակները արտասահմանի բաժանորդներին:

Մեզ հաղորդում են, որ Ղամբարեան մրցանակի համար Ներսիսեան դպրոցի ուսուցչական ժողովը ընտրել է մի մատնաժողով հինգ հոգուց բաղկացած: Ընտրվել են դպրոցի ուսուցիչներից՝ Ստեփան Մալխասեան (11 ձայնով), Գէորգ Բարխուդարեանց (6 ձայնով) և Իսահակ Յարութիւնեանց (5 ձայնով), իսկ դրսից Ալէքսանդր Երիցեանց (միաձայն) և Ստեփան Զելինսկի (8 ձայնով):

Մեր ինտելիգենտ երիտասարդների ուշադրութիւնն ենք հրաւիրում «Մշակի» այսօրվայ համարում տպագրված Ախալքալաքի թղթակցութեան վրա: Ահա մի համեստ, բայց օգտակար գործ, որին պէտք է անպատճառ աջակցել:

Յօգուտ Լէյպցիգի աղքատ հայ ուսանողի (տես «Մշակ» № 133) ստացանք Արշակ Միլեանից 5 ռուբլի:

Մեր օպերային թատրոնի իտալական խումբը հինգշաբթի օր, նոյեմբերի 14-ին, երկրորդ անգամ հասարակութեան մեծ զուարճութիւն պատճառեց՝ հանդէս բերելով իր ամենալաւ ոյժերից մէկը, երգչուհի Սիմենեբերգին: Շնորհալի երգչուհին այդ օրը դուրս եկաւ «Ցրուբադուր» օպերայի մէջ, գնչուհի Ազուչինայի դերում. նրա ձայնը զօրեղ է, հաճելի, նա երգում է փորձված և վստահ: Երգիչ Զիօկամելլօ՝ կոմս Լունայի դերում, երգիչ Պերէս՝ Մանրիկայի դերում, և երգչուհի Պիցցադալի՝ Լէօնօրայի դերում աջողութիւն ունեցան: Պէտք է խոստովանել, որ իտալական խումբը, եթէ նա լրացնվի ելի մի քանի ձայներով, կարող է կատարելապէս ապահովել օպերային ներկայացումների գործը ներկայ սեզօնում:

Երէկ, ուրբաթ, ամսիս 15-ին երեկոյեան, կայացաւ կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան առաջին նիստը, որ նուիրված էր հերթական գործերի քննութեան և առաջիկայ 1897 թւի նախահաշիւի հաստատութեան: Մեծ խօսակցութեան առարկայ եղաւ «Кавказское Сельское Хазяйство» շաբաթաթերթի նիւթական ապահովութեան խնդիրը: Ժողովը որոշեց շարունակել հրատարակութիւնը, իսկ ծախսերը պակասեցնելու նպատակով կը գումարի առանձին նիստ առաջիկայ շաբաթվայ ընթացքում:

ԵՐԵՒԱՆԻՑ, թեմական դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Երևանի հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը սրանով յայտնում է իր չնորհակալութիւնը. 1) Երևանցի հանգուցեալ Խաչատուր Թադէոսեանցի ժառանգներին, որոնք նուիրել են ի յիշատակ իրանց հօր՝ Խաչատրի և նրա որդի Կարապետի՝ չորս հարիւր ռուբլի, յօգուտ Երևանի թեմական դպրանոցի. 2)—Յովսէփ Մէլիք-Աւետիսեանցին, որ նուիրել է ի յիշատակ իր մօր՝ Զանազանի՝ յիսուն ռուբլի. և 3) Ալէքսանդրօպօլի քնակիչ Մահտեսի Պետրոս Մխիթարեանցին, որը նուիրել է ի յիշատակ իր հանգուցեալ եղբօր՝ Մահտեսի Յարութիւնի՝ մի հարիւր ռուբլի:»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Շաբաթ երեկոյեան, նոյեմբերի 9-ին, կայացաւ Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը, ընտրելու նախագահ և քարտուղար ու քննելու 1897 թւականի նախահաշիւը: Թեմական դպրոցի տեսուչ Մեսրովբ վարդապետը ընտրվեց ընդհանուր ժողովի նախագահ, իսկ Յ. Մէլիք-Շահնազարեան՝ քարտուղար: Հաստատվեց եկող տարվայ նախահաշիւը մի քանի անչնչան փոփոխութիւններով: Մուտք սպասվում է մօտ 2000 ռ.: Ներկայ էին ընդամենը քսան և վեց անդամ»:

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են. «Երկու տարի առաջ այստեղի հայոց եկեղեցու երէցփոխ Ստեփան Գրէգորեան, ստանձնելով իր պաշտօնը, զրկել էր եկեղեցու քահանաներին մատաղների մորթիների արդիւնքից, որը, համաձայն Թիֆլիսի նախկին առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսի հրատարակած հրահանգի, պատկանում է եկեղեցուն: Ահա մի քանի ամիս է, որ քահանաները բողոք են տուել երէցփոխի դէմ հոգևոր իշխանութեանը պահանջելով, որ մատաղների մորթիներն իրանց յատկացնվեն: Բացի սրանից, եկեղեցական կանոնով, չուրջառացու դիպաղարդները պատկանում են եկեղեցուն, իսկ քահանաները պահանջում էին, որ այդ էլ իրանց սեփականութիւն համարվեն: Գօրու հոգևոր կառավարութիւնը գործը վճռել էր յօգուտ քահանաների, բայց Թիֆլիսի կօնսիստորիան—դիպաղարդները յօգուտ եկեղեցու, իսկ մատաղների մորթիները—քահանաների: Երէցփոխը անբաւական մնալով այս վճռից՝ բողոքել էր թե-

---

դամ փոխել էր գործելու եղանակը և վերջը հասել էր այն մտքին, թէ ճակատ առ ճակատ կուռել անհնարին է, թէ պէտք է փոքրից սկսել մեծին հասնելու համար, դեռ չէր ասել իր վերջին խօսքը: Արդէն վեց մարդիկ ուսերի վրա մի մեծ գերան էին տարել դողալով, քրտինք թափելով և հասցրել էին ժայռերի ծայրին: Եւ երբ գերանի ծայրը դրին այնտեղ, ուր գետի խոռոչի բերանը պիտի լինէր, Մկօն, որ կանգնած էր նրանց կողքին, վերջապէս, կանչեց.

—Հիմա մեր ձեռքին է...

Դեռ չէր վերջացրել նա այդ խօսքերը, երբ մի ինչ որ բան որոտաց: Մարդիկ դէս ու դէն փախան, իսկ նա բարձր ձայնով ծիծաղեց, և ապա հանդարտ գնաց դէպի ափը, հագաւ իր չորերը:—Նա յայտնեց ամենքին որ քարը տեղահան է եղել. մնացածը կանի ինքը, ջուրը:

Եւ իրաւ, գիշերը կատարեց այդ զարմանալի գործը: Առաւօտեան գետը ցած էր թափվում իր սովորական ճանապարհով: Բայց խութեցիների համբերութիւնը դեռ երկար պիտի փորձվէր: Սարօի գերեզմանը չէր երևում. նրա տեղ քարերի մի կոյտ էր մնացել:

Հարկաւոր եղաւ մարդիկ իջեցնել ձորի յատակը: Երկու օրվայ գործ էլ այնտեղ կար: Եւ երբ բրիչը առաջին անգամ զարնվեց սպիտակ սալ քարին, Վարդանի-կալում հաւաքվածները, որոնց գործն էր նայել և տեսնել թէ ինչ կը լինի վերջը, սկսեցին աղաղակել. միմեանց աչքալոյս էին ասում:

Իրիկնադէմին բոլոր աշխատաւորները հաւաքվեցին Եղուարդի եկեղեցու դրանը: Խօսք ու զրոյցի քաղցր ժամանակն էր, երբ եկաւ ծերունի երէցը: Նա էլ նստեց մեծ գերանի վրա: Եղօն նորոգեց պատմութիւնը, մի մի նկարագրեց Մըկօի արածները, գովեց նրա խելքը: Երէցը հաստատեց որ Աստուած կը լսէ ժողովրդի խօսքը ու կօգնէ նրան:

—Նա հիմա էլ լսում է մեզ, հիմա էլ օգնում է մեզ... Ծառայ ենք Աստուծուն, այսօրվանից գիտենք, որ նա մեզ հետ է:

Եղօն կարեց Մկօի խօսքը. նա չէր կարողանում պահել իր ուրախութիւնը և ասաց.

—Սարեցին սուր լեզու չունի, որ ամեն ինչ հասկացնի. բայց այսքան մարդկանց մէջ չը կար մէկը, որ չը հասկանար թէ ինչու երեք օր անընդհատ մենք կռւում էինք արնախում գետի հետ:

—Ի հարկէ, գիտենք, պատասխանեց քահանան.—խութեցի մանուկն էլ հասկանում, է որ պէտք է պահպանել պապերի գերեզմանները:

Այդ խօսքերից յետոյ տեղից բարձրացաւ մի գիւղացի:

—Ինձ էլ հէնց այդ է զարմացնում, ասաց նա:—Երեք օր առաջ, առաւօտը, Շէն գիւղի մօտով անցնելիս՝ տեսայ որ հեղեղները շատ քանդոտել են Բղդօի գերեզմանի կողերը. աւազ, քար, ցեխ շատ էր թափված, քարը չէր երևում և կարծես մեծ ճեղք էր գոյացել նրա գլխի կողմում: Եկայ Վարդանի-կալի մօտ, տեսայ որ մերոնք նոր են հանում իրանց չորերը, և խոյսն պատմեցի: Ոչ ոք տեղից չը շարժվեց: Ինչ մեղքս թաքցնեմ, ասացի, խութեցին ուրիշ մարդ է դառել: Բայց իմ ընկերը ասաց, որ ես էլ հանեմ չորերս, և աւելացրեց. «Բղդօն կը կորչի, եթէ Սարօն կորած լինի»: Եւ ապա ինձ հասկացրին այդ խօսքերի միտքը: Այսօր առաւօտ տեսայ Բղդօի քարը. նա նոյն դրութեան մէջ էր: Բայց ես անցայ: Էգուց իմ պարտքը լինի, որ գնամ, դրստեմ... Չէ՞ որ նա մեր լաւ պապն է:

Ամենքը հաւանութիւն տուին, իսկ քահանան այդ մարդուն էլ օրհնեց: Մկօն վերկացաւ և, նայելով երկնքին, ասաց.

—Հիմա, տէրտէր, մեզ համար ժամ ասիր: Մի օր խութը կը հասկանայ որ երկու կաչի չէ տալիս նոյն իսկ ոչխարը: Բայց այդ օրը երբէք չէր գայ, եթէ մեր կաչին քերթելուց յետոյ մեր մաչկած մսի վրա ձէթ քսէին, որպէս զի չուտ մռանանք ցաւն ու կսկիծը: Մեր վէրքերի վրա, փառք Աստուծու, աղ են ածում, և աղը միշտ կայ—Սարօն: Նա ամօթ ու կրակ է, բայց դեռ մեր մարդկանց կրակ չէ տուել: Կը գայ մի օր, երբ նա մեզ լաւութիւն կանի և մի լաւ կը վառէ մեզ: Աստուած դրա համար է պահում նրան:

Սկսվեց ժամասացութիւնը: Եկեղեցին լիքն էր, բազմութեան մի մասը դրսում մնաց. այդտեղ բաց արին գլուխները, ծունր դրին, ցեխոտ ու կոչտ ձեռներով խաչ հանեցին երեսներին: Երկինքը պարզ էր, ժպտում էր, և ամենքը, ամենքը փառք էին տալիս նրան:

Արեը մայր մտաւ, ժողովուրդը ցրվեց դէպի գիւղերը: Խմբերը բաժանվելիս ասում էին միմեանց, որ յաջորդ օրը շուտ պէտք է գնալ, ջրաղաց չինել: Առանց այդ էլ շատ էր ուշացել այդ գործը: Հարկաւոր էր շատ մեծ աշխատանք, որ շուտ գայ այն օրը, երբ խութը հաց կունենայ:

—Իսկ այն միւս օրը, որի մասին խօսեց Մըկօն:

Այդ հարցը տուողը մի ջլուտ, բարձրահասակ տղամարդ էր: Նրա ուղեկիցները կանգ առին, միմեանց նայեցին: Արդէն հասել էին բլուրի գլուխը: Արևելքից սպիտակ լոյսի խուրձեր եկան, թափվեցան ամեն տեղ: Մարթուկի հին վանքի ետեից դանդաղ բարձրանում էր լուսինը: Ամենքը «Աստուած» կանչեցին և դիմեցին դէպի ձորը...

Լէօ

մական առաջնորդին, որը, իրաւացի գտնելով երէցփոխի վարմունքը, արդարացի է համարել նրան։ Առաջնորդի այս վճռով փակվում է մեր հասարակութեան «օրվայ հարցը»։ Զարմանում ենք, ճչմարիտ, որ Գօրու հոգևոր կառավարութիւնը և Թիֆլիսի կօնսիստորիան քահանաների չահերը գերադասել էին եկեղեցական չահերից։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պարիզում կազմվեց մի ընկերութիւն, որ կը-բում է Ֆրանս-հայկական անունը և իր նպատակներով նման է Լօնդոնի անգլօ-հայկական ընկերութեան։ Նախագահ ընտրված է հայր Շարմանն, խորհրդի անդամներ՝ Լեմիր, Մարիլիէ, Մօնիէ, Պասսի, Պիւօ, Վիլօ և ուրիշներ։ Նոյեմբերի 15-ին, Լօնդոնից Պարիզ գնաց անգլօ-հայկական ընկերութեան կողմից մի պատգամաւորութիւն՝ շնորհաւորելու հայր Շարմանին և հրաւիրելու նրան Լօնդոն՝ կարդալու այնտեղ Ֆրանսերէն լեզուով մի դասախօսութիւն հայերի օգտին, որովհետև իրերի վիճակը Կ. Պոլսում այժմ աւելի ևս վատթարացել է։ Պարիզում հայերի թիւնամիների թիւը շատ մեծ է, իսկ բարեկամները չեն միացած։ Թիւրքիան տարեկան 32,000 ֆռանտ ստերլինգ ծախսում է Պարիզում ազդեցնելու մնացած հայերի դասը։ Ֆրանսիան շատ շուտով կը համոզվի նոր ընկերութեան միջոցով, որ հայկական գործը բրիտանական մի ինտրիգայի առարկայ չէ, այլ քրիստոնէական սուրբ պատրանքութիւն։

—

Անգլիական աղատամիտները սկսել են յայտնել իրանց դժգոհութիւնը լորդ Սալսբիւրիին։ Նրանք կարծում են, որ Անգլիայի առաջին մինիստրը չը կարողացաւ աջող գործել և կորցրեց դասը։ Այժմ սկսում են խօսել այն բանի մասին, որ աղատամիտները այլ ևս չը շարունակեն յոյս կապել լորդ Սալսբիւրիի վրա և բոլորովին ուրիշ հողի վրա դնեն հայոց հարցը։ Աղատամիտներից երեք անձն ուղղել են «Daily News» լրագրի խմբագրութեան հետևեալ նամակը.

«Պարոն, թոյլ տուէք յայտնել ձեր ընթերցողներին, որ Լօնդոնի աղատամիտները մի ժողովում, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 11-ին, որոշեցին հետևեալը. 1) Ժողովը եկաւ այն կարծիքին, որ անկուսակցական գործունէութեան եղանակը հայկական գործում մի սխալ էր և այժմ աղատամիտ կուսակցութիւնը պէտք է մտցնի հայոց հարցը իր ծրագրի մէջ, իբրև կուսակցական հարց. 2) Ժողովը յայտնում է, որ նրա կարծիքով արևելեան քաղաքականութեան ներկայ անաջողութիւնը հետևանք է պանսլամական քաղաքականութեան. լորդ Սալսբիւրի, լինելով անդամ այն վեհաժողովի, որ տուեց մեզ Բերլինի դաշնագիրը, չէ կարող ներշնչել մեզ հաւատ դէպի ինքը։ Այդ պատճառով վճռված է կազմել մի կոմիտետ, որ պէտք է վերոյիշեալ ծրագրով կազմի երկրի մէջ միտինգներ։ Ով մեզ համակրում է, թող յայտնի այդ մասին նշանակած հասցէով։»

Ստորագրել են՝ նախագահ՝ Ջօրջ Բըսսել, քարտուղար՝ Կլէյդէն, դանձապահ՝ Թօր։

—

«Daily News» լրագրում կարդում ենք. «Դեռ 1887 թուականին, երբ անգլիացիները լռած էին, Ֆրանսիայի պետական անձերը խօսեցին հայերի մասին։ Ֆրեյսինէ յայտնեց, որ Ֆրանսիան ինքնագլուխ անկարող է միջամտել այդ գործին, բայց կը մասնակցի, եթէ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններից մէկը իր վրա կը վերցնի հարց յարուցանելու նախաձեռնութիւնը, և մասնացոյց եղաւ Անգլիայի և Գերմանիայի վրա։ Այն ժամանակ հայերը դիմեցին լորդ Սալսբիւրիին, յետոյ Գօրլէին, բայց նրանցից ոչ ոք ոչինչ չարեց այդ գործի համար, առարկելով, որ միայնակ ոչինչ չեն կարող անել, և այդպիսով հայերի դասը կորաւ։»

—

Հեռագիրը արդէն հաղորդեց, թէ Լօնդոնի հայկական կոմիտեն խոստացել է Արթին-փաշայի որդուն՝ դադարեցնել յեղափոխական խմբերի գործունէութիւնը Թիւրքիայում։ Այժմ լրագիրները աւելացնում են, որ «Դաշնակցութիւն» կուսակցութեան ներկայացուցիչները ծընէվում, որոնց հետ նոյնպէս բանակցում էր Արթին-փաշայի որդին, յայտնեցին նրան, որ իրանց կազմակերպութիւնը ընդունում է ազակենտրոնացման սկզբունքը, և այդ պատճառով նրանք իրաւունք չունեն այս կամ այն կերպ ազդել Թիւրքիայի տեղական կոմիտեների գործունէութեան վրա և որ մի այդպիսի գործունէութիւն պայմանաւորվում է բացառապէս Թիւրքաց կառավարութեան ներքին քաղաքականութեամբ։

—

Կ. Պոլսից գրում են. «Այս վերջին օրերս, երբ մահմեդական ընտանիքներին պատկանող բազմաթիւ երիտասարդներ անհետացան, կասկածվելով թէ նրանք բէֆօրմների կողմնակիցներ են (ասում են, որ ոստիկանութիւնը նրանց կալանաւորել է և պահում է որպէս պատանդ, ստիպելու նրանց ծնողներին հաւատարիմ մնալ սուլթանին), մեծ յուզմունք սկսվեց Ստամբուլում։ Սօֆթաները կամեցան միանալ և գնալ Իլդիզ՝ խնդրագիր տալու սուլթանին։ Նազիմ-փաշան յարձակվեց և ցրվեց նրանց ոստիկանութեան և հեծեալ ժանդարմների միջոցով։ Մեծ վիշտը դրա համար խիստ յանդիմանութիւն կարդաց նրան։ Նազիմը, որին իր գոհունակութիւնը ցոյց տալու համար սուլթանը աւելացրեց ռոճիկը, ստիպված եղաւ հրաժարական տալ։ Այն դիրութիւնը, որով ընդունվեց Նազիմի հրաժարականը, տեղեակ չը ջանները նշան են համարում, որ Խալիլ-Ռիֆատ փաշայի մինիստրութեան օրերը հաշվված են։ Իլդիզում մինչև անգամ վճռել են, Եւրօպային բաւարարութիւն տալու համար, ամբողջ մինիստրութիւնը բարեփոխել, որպէս նախադուռն՝ բէֆօրմներ մտցնելու համար։»

—

Լօնդոնից ուսուց գործակալութիւնը հեռագրում է մայրաքաղաքի լրագիրներին. «Պետութիւններին չէ ներկայացրված Թիւրքաց կառավարութեան մէջ մտցնելի բէֆօրմների որ և է ծրագիր, որ նմանութիւն ունենայ «Daily News»-ի մէջ տպված ծրագրին։ Ամենքը ընդունում են, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել Թիւրքիային դրամական օգնութիւն հասցնելու համար. ուրիշ կերպ հարկաւոր բէֆօրմներ մտցնելը անհնարին է։ Սակայն այս հարցի վերաբերմամբ էլ պետութիւնների մէջ դեռ որ և է վերջնական ծրագիր չէ մշակված։ Քանի որ եւրօպական կաբինէտները չեն դայ մի համաձայնութեան՝ բէֆօրմների ծրագրի վերաբերմամբ, անգլիական ազգին հարիւ թէ հարկաւոր լինի խօսել այն ծրագրի օգտին, որի նպատակն է օգնել Թիւրքիային դրամի կողմից։»

—

«Times» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է, որ նոյեմբերի 4-ին Թիւրքաց մայրաքաղաքի աղգաբնակութիւնը զարմացած էր՝ կարդալով լրագիրներում կառավարչական հաղորդագրութիւնը, թէ իւրաքանչիւր նահանգում նշանակվում են յատուկ յանձնաժողովներ «նուիրատուութիւններ» կամ աւելի ճիշդն ասած՝ ստիպողական հարկ ժողովելու համար։ Այդ զարմանքը բացատրվում է նրանով, որ Բ. Դուռը լուր տարածեց, թէ ոչինչ նոր հարկ չի սահմանվի։

—

«Новое Время» լրագիրը նոյեմբերի 7-ի համարում տպագրել է մի հետաքրքրական առաջնորդող յօդուած, որի մէջ մի առանձին չեշտով և պարզութեամբ այն միտքն է արտայայտում թէ, իսկապէս Եւրօպան գործ չունի արևելեան հարցի մէջ։ Ոչ մի ընդհանուր համաձայնութիւն, նոյն իսկ ոչ մի կօնֆերէնցիա չէ կարող կարգաւորել Թիւրքիայի այժմեան խառն, օրհասական դրութիւնը։ Թիւրքիայի հարցի մէջ չահ ունեն միայն երկու պետութիւններ—Թիւրքիան և Ռուսաստանը։ Նրանք պէտք է խօսեն միմեանց հետ, նրանք պէտք է համաձայնութիւն կայացնեն։ Ռուսաստանը իրապէս կարող է պաշտպանել Օսմանեան պետութեան ամբողջութիւնը. հարց կարող է ծագել միայն այն մասին, թէ ինչ սահմանների մէջ և պայմաններով պիտի ապահովվի այդ ամբողջութիւնը։ Լրագիրը պարզութեան համար ակնարկներով ցոյց է տալիս, որ Կ. Պոլսի նեղուցները պէտք է բացվեն ռուսաց պատերազմական նաւերի առաջ. դա Ռուսաստանի իրաւունքն է, որ հաստատել են Թիւրքիայի դէմ մղած բազմաթիւ պատերազմները, մի իրաւունք, որ ոչնչացրել են եւրօպական կօնֆէրէնցիաները, որոնք հէնց այդ պատճառով Ռուսաստանի մէջ յարուցանում են վատ, նոյն իսկ ցասանի մէջ յարուցանում։ Միանգամից, երբ նեղեցնող յիշողութիւններ։ Միանգամից, երբ նեղեցնող յիշողութիւններ։ Միանգամից, երբ զուցները այլ ևս փակված չեն մնայ, Թիւրքիայում կը վերանայ Անգլիայի վարած ագիտացիան, որ երկու տարվայ ընթացքում այնքան թշուառութիւններ ստեղծեց Փոքր-Ասիայի քրիստոնեայ ազգաբնակութեան համար։ Ըստ երևոյթին, ռուս լրագիրը բացի դրանից չէ ճանաչում մի ուրիշ միջոց, որ աւելի իրական, աւելի հեշտ գործադրելի լինի, քան եւրօպական դիպլոմատիայի անվերջ և ապարդիւն ծրագիրը, խօսքերը, աղմուկները։ Նոյն իսկ Թիւրքիան ծուռ ճանապարհի վրա է կանգնած, քանի որ փորձում է եռանդով պատրաստվել պատերազմի համար։ Նա իր վերջին դրամական միջոցները հաւաքում է ահագին քանակութեամբ զէնք ձեռք բերելու նպատակով։ Բայց դրանից լաւ բան չի դուրս գայ։ Ի՞նչ կը լինի մի պետութիւն, որ կը հաւաքէ զէնքերի ահագին քանակութիւն և ինքը կը դառնայ մուրացկան, կատարեալ աղքատ։ Եւ ում դէմ պիտի գործածէ նա այդ զէնքերը։ Թիւրքիայի միակ թշնամին Անգլիան է, իսկ նրա զրահաւորների համար Մանլիխերի գնդակները ոչինչ են։

Պատասխանելով Սալսբիրիի օրգանին, «Биржевыя Вѣдомости» լրագիրը այն միտքն է յայտնում, թէ Ռուսաստանի պատմական ուսանդութիւններին միանգամայն հակառակ կը լինէր իր խնամակալութեան տակ առնել մի այնպիսի փտած ասիական դիակ, ինչպիսին է Թիւրքիան։ Մի կողմ թողնելով նոյն իսկ այն հանգամանքը, որ Եւրօպան յամենայն դէպս նոյնքան դէմ կը լինի Ռուսաստանի առանձնացած միջամտութեան Թիւրքիայի գործում, որքան այդ նա ցոյց տուեց Անգլիայի նոյն տեսակ ձգտման դէմ, լրագիրը ասում է, որ Ռուսաստանը իր բազմաթիւ պատերազմներով թուլացրել է Թիւրքիան ոչ թէ այն մտքով, որ վերջ ի վերջոյ նրա վրա հաստատի խնամակալութիւն և արհեստական միջոցներով պահպանէ այդ մարմինը, որ քայքայվում է ճակատագրական անխուսափելի օրէնքով։

—

Կ. Պոլսից հաղորդում են «Morning Post» լրագրին, իբրև թէ սուլթանը մտադիր է նորից մտցնել Թիւրքիայում 1876 թուի սահմանադրութիւնը մուսուլման ազգաբնակութեան դժգոհ տարրերին գոհացում տալու և եւրօպական պետութիւնների միջամտութիւնը խափանելու համար։ Այդ սահմանադրութեան էութեան հետ մենք կը ծանօթացնենք մի ուրիշ անգամ մեր ընթերցողներին։

—

Կ. Պոլսի թիւրք լրագիրներ լի են մահվան պատժի հրամանագրերով։ Առաջ ենք բերում այդ անմեղ զոհերի մասին մի քանի տեղեկութիւններ։

«Մահուան պատիժ կրելու դատապարտեցան բեռնակիր Սվազցի Նիկողոս Մախոսեան (40 տարեկան), Գանվէճի Սըվասցի Տիգրան Մախոսեան (24 տարեկան), Նաւերուն մէջ Գիլէճի Սըվասցի Բաբէլ Եղիսեան (50 տարեկան), դիչերապահ և բեռնակիր Սըվասցի Մարդար Պողտասարեան (48 տարեկան), որոց հետ նաև Վիթալի խանի սենեկապահ Սըվասցի Վարդան Պապիկեան (56 տարեկան), որ ամբաստանված էին թէ՝ անցեալ օգոստոս ամսոյ 17-ին շաբաթ առաւր երեկոյեան դէմ ժամը 11-ին ատենների, Դալաթիա Օսմանեան Պանքային փողոցը Վիթալի ըսուած խանէն օսմանեան զօրաց և այլոց վրայ բազում զէնք ու ռումբ նետած են, և կայսերական զօրաց սպաներէն Տուրմուշ աղա և զինուորներէն Գատիր և ուրիշ չորս մարդիկ վիրաւորուած են։ Սոյն դատապարտեալք թէպէտ չը խոստովանեցան, բայց դատարանն վկայութեանց և այլ պարագայից վրայ տուաւ մահուան վճիռն, նկատելով նաև թէ յիշեալ խանի մէջ ատենցմէ զատ գտնուած չորս մարդիկ ալ արդէն սպանեալ բռնուած են (որպիսի քաջութիւն), թէ՝ իրենցմէ զատ ուշ ոք կը գտնուէր խանին մէջ, և թէ իրենց այդ վարմունքէն կը հետևի թէ հայ խռովարարաց դասէն են, և մահուան պատժոյ արժանի։

«Մահուան դատապարտեցան՝ Խասգիւղի Խալըճօղլու Եենիմահալլէի թաղի բնիկներէն Աւետիս Կարապետեան, 42 տարեկան, օտար վաճառաց մաքսատան քննիչ պաշտօնեայ՝ 500 ղրշ. ամսաթոշակով և տորա որդին Օննիկ, 22 տարեկան, յիշեալ մաքսատան մէջ նպարավաճառ, որք ամբաստանուած էին թէ՝ վերջին խռովութեան ժամանակ Խասգիւղ իրենց բնակարանէն բէվոլվէր պարպելով, անկէց անցնող ծովային զինուոր Թէվֆիգ աղան վիրաւորած սպաննած, Խումպարխանէի սպասաւոր Հիսէյինն վիրաւորած, իրենց ատն խուզարկութեան ատեն փամփուշտի գօվան և այլ գտնուած են, և իրենք խռովարարաց դասէն են։»

—

«ԻԳՏԱՄ» ԵՒ «ԹԷՐՃԻՄԱՆԸ ՀԱԳԻԴԱԹ»

—

Այս երկու թիւրք լրագիրները չարունակում են ոսկի ստանալ և աջ ու ձախ այնպիսի սուտ հերքումներ տպագրել, որ նոյն իսկ Զէքի և Շաքիր փաշաները կը կարմրեն։ Ահա փաստերը։

«Լոնտոնի Տէյլի Նիւզ լրագիրն՝ որոյ Արևելեան խնդրոյն վրայ տուած լուրերն ու հրատարակութիւններն միշտ զգուշութեամբ կարդալ պէտք է (մինթէ), գրած է թէ՝ Վանայ մէջ կռիւ մը պատահած է, մինչդեռ յիշեալ նահանգէ ամէն օր տրուած լուրերն կիմացունեն թէ, չնորհիւ Օգոստ. Սուլթանին (?) այն կողմերն բարեկարգութեան (?) որ և է վնասակար շարժում տեղի ունեցած չէ։»

«Բոլորովին սուտ (?) ու անհիմն Ճէնէվրայի Ժուրնալ տը Ժընէվ անուն լրագրին հրատարակած լուրերն, զորս ընդուներ է ականատես թղթակցէ մը։ Իբր թէ Անատոլուի հայաբնակ վայրաց և մանաւանդ Վանայ նահանգի մէջ՝ 1400 տուն կողոպտուեր, 354 տուն կրակի տրուեր, 1000-է աւելի մարդոց կորուստ եղեր, եկեղեցեաց ու վարժարանաց բաղումք յաւերակ դարձեր, 27000 լիրայէ աւելի վնաս եղեր է, և այլն։ Ասոնք ամենքն ալ անհաւատալի են և անտեղի (?)։ Տարակոյս չը կայ թէ՝ յիշեալ լրագրին այդ լրատուն օտար երկիրներ փախչող խռովարարաց դասէն է։»

«Իգտամ» կը հերքէ Ճէնէվրայի Ժուրնալ տը Ժընէվ լրագրի մէջ Էկինի դէպքին վրայ հրատարակուած տեղեկութիւններն, որք են կանայք ու տղայք ազատելու համար գետը նետուեր են, 800 հոգի սպանուեր են, Հայոց 600 տուները կրակի տրուեր են, և այլն։ «Իգտամ» կը յաւելու թէ՝ արդէն մանրամասն գրած ենք Էկինի դէպքին վրայ, և աւելորդ է կրկնութիւններ ընել։»

«Կ. Պոլսոյ վերջին դէպքէն ետքը՝ իրենց երկիրը ձգող Հայերն ուր որ գացած են, ժողովրդեան ու կառավարութեան նողկանաց ենթակայ ըլլալով՝ սկսած են գովել (?) օսմանեան երկրին մէջ վայելած բարիքն։ Պուլղարիա, Գաղղիա և ուրիշ տեղեր գացողներն՝ դժուարութենէ դժուարութեան և թշուառութենէ թշուառութեան մէջ իյնալով (!!) յետին ատիճան տառապանք կապրին և կը զղջան իրենց ծնելուն վրայ, ինչպէս կը հաստատեն ամէն օր տրուած լուրերն։ Լոնտոնի «Տէյլի Մէսէնճըր» լրագիրն կը պատմէ թէ՝ հոլանտական չոգենաւով մը Նիւ-Եորք եկնող 150 Հայ աղքատներ, գաղթականաց յատուկ կանոնական գրամն չունենալով, տեղական կառավարութեան կողմանէ որ և է պաշտպանութեան ու նպաստի արժանի չեն համարուէր և նոյն չոգենաւով ետ դրկուեր են Եւրոպա։ Միայն այսչափ չէ։ Ամերիկայի մէջ հաստատեալ աղքատախնամ ընկերութիւն մը ուզեր է հոլանտաւորել այս Հայ աղքատներն, սա-

կայն ժողովուրդն արգիլեր է (որպիսի անամօթութիւն) նկատելով որ այդ Հայերն մարդկութեան թշնամի և խռովարարութեան հակամէտ խայտառակներէն են։

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՕԼՍԻՑ

(Կ. Պոլսի լրագիրներից)

«Թուրք լրագիրք կը հրատարակեն թէ՝ Սըվասցի Յովհաննէս Առաքելեան, որ $1^1/_2$ տարի յառաջ Սըվասի վարչական ժողովոյ անդամ փոխուգեան Նաղարէթ էֆէնտին սպաննել մատդրող ու վիրաւորող անձերէն էր և փախած,—վերջերս բռնուած բանտարկուած է։»

«Անատոլուի բարեկարգութեանց ընդհանուր քննիչ Շաքիր փաշայի առաջարկութեամբ, ի մօտոյ մայրաքաղաքէս երկրաչափ մը պիտի ղրկուի՝ Վանայ նահանգի երկաթի ու ածուխի հանքերն քննելու և տեղեկագրելու համար»։

Երջանիկ խաբեբաներ...

«Անատոլուի նահանգաց մէջ պատահած խառնակութեանց քննիչք՝ քանի մը օր Տիարպէքիրի մէջ մնալէ ետքը Պիթլիս ուղևորեր են։» Ինչ օգուտ։

«Պալըքէսերի բնիկներէն Փապուչճը Յովհաննէսի աղջիկն Սարայ՝ մահմեդական կրօնքն ընդուներ և Էմինի անուանուեր է։ Դարձեալ՝ Պալըքէսերի մէջ երկու տարիէ ի վեր բնակեալ Միխալիճցի Սարգիս մահմեդական կրօնքին յարեր, և Ահմէտ Թէվֆիգ կոչուեր է։» Իսկ մնացած հաղարաւորները. ինչո՞ւ չեն յիշատակված...

ՎԱՆԻ ԼԻՃԸ

Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք. «Կառավարութիւնն նկատելով որ Վանայ ծովուն մէջ գտնէ 2—3 շոգենաւուց գտնուիլն ըստ ամենայնի օգտակար է, նախարարաց ժողովով որոշուեցաւ որ յիշեալ ծովուն վրա շոգենաւ ու շէջմ չմնելու համար նաւարան մը կանգնուի և շոգենաւներն անդ չմնուին։ Նորին կայսերական Մեծութիւնն վաւերացոյց այս որոշումն, և հրամայեց որ մինչև առաջիկայ գարուն աւարտի չմնութեան գործն։ Ըստ այսմ, ծովային նախարարութիւնն Բ. Դրան մատոյց պէտք եղած տեղեկագիրներ։» Հաղար անգամ այդպիսի տեղեկագիրներ են կազմուել, բայց անօգուտ։ Երբ երկրի մէջ ժողովուրդ չէ մնացել, ուստի համար պէտք է բանեն նաւերը։

«ՐԷՖՕՐՄՆԵՐԻ» ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Թիւրքաց կառավարութիւնը տպագրել է Կ. Պոլսի լրագրներում իր հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Անատոլուի քանի մը նահանգաց և այլ կողմանց համար, ընդհանրապէս, անցեալ տարի կայսերական հրամանաւ որոշեալ և ի պաշտօնէ հրատարակեալ զանազան բարեկարգութեանց անյապաղ գործադրութեան յատկացեալ յանձնաժողովոյ անդամ կարգեցան՝ կենսագրական յանձնաժողովոյ նախագահ Շիւքրի և կրօնական գործոց վերատեսուչ Զիվէր պէյերն։ Վերոյիշեալ յանձնաժողովն՝ որ ներքին գործոց նախարար Վսեմ. Մէմտուհ փաշայի նախագահութեան ներքև կը գտնուի, 15—20 օրէ ի վեր մեծ ջանքով ու հոգածութեամբ (?) աշխատելով՝ հեղհեղէ հրամաններ կը ղրկէ գաւառներն, և միւս կողմանէ գաւառական իշխանութիւնք փոյթ կը տանին տրուած հրամաններուն անյապաղ գործադրութեան համար (!)։ Յանձնաժողովոյն տնօրինութեանց կարգէն է՝ այս օրերս կառավարչութեանց օգնականներու ընտրուիլն, և ժանտարմայի ու ոստիկանութեան անյապաղ կազմակերպութեան համար ալ պէտք եղած միջոցներն կարգադրուած են։ Վերջապէս ըստ միակ բաղձանաց նորին կայսերական վեհափառութեան, յանձնաժողովն անդադար փոյթ կը տանի, վայրկեան յառաջ (?) գործադրել ամէն բարեկարգութիւն, ժողովրդեան օգտին՝ զարգացման ու կատարեալ բարօրութեան համար»։

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՍՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Անցեալ անգամ մենք հաղորդեցինք Հնդկաստանում տիրող սովի մասին։ Այս անգամ անօգուտ չենք համարում մի քանի խօսք ասել այն միջոցների մասին, որոնց բրիտանական կառավարութիւնը և հասարակական բարեգործութիւնը կազմակերպում էին նախկին սովերի ժամանակ։ Այդ հարցը հետաքրքրութիւն է ներկայացնում և սկզբունքի տեսակէտից։ Ցայտնի է, որ հասարակական բարեգործութեան վերաբերմամբ երկու իրար բոլորովին հակառակ տեսութիւններ կան. մէկը ընդունում է, որ ուղղակի նպաստ տալը, թէ դրամով, թէ հացով և թէ հագուստով, անբարոյականացնում է ժողովուրդը և անընդունակ է դարձնում նրան վերսկսել իր սովորական զբաղմունքը. միւսը հակառակ կարծիք է յայտնում և գտնում է, որ սովի և այլ աղէտների ժամանակ պէտք է ղեկավարվել միայն սովատանջին և թշուառին փրկելու մտքով։

Բրիտանական կառավարութեան գործ դրած միջոցները անցեալ սովերի ժամանակ ժողովրդի ցաւերը ամոքելու համար հետեւեալներն են եղել. նա թեթեւացրել է կամ բոլորովին բաշխել է հարկերը, փոխարինաբար դրամ է տուել հողատէրերին և պրէմիաներ է նշանակել ցորեն ներմուծելու համար։ Ցետոյ կառավարութիւնը իր պարտաւորութիւնն է համարել աշխատելու ընդունակ անձանց գործ և զբաղմունք տալ ու վարձատրել, ձեռնարկելով զանազան հասարակական շինութիւնների, իսկ անընդունակներին օգնելու գործը թողել է հասարակական բարեգործութեան, բանալով հանգանակիչ մանաժողովներ և թոյլ տալով ժողովարարութիւններ։ 1837 թւի սովի ժամանակ, կառավարութիւնը 100,000 հոգու զբաղմունք տուեց և ծախսեց 20 միլիոն ռուբի, իսկ 1873 թւին, 735,000 կարօտեալներ ամբողջ 9 ամիս աշխատում էին վարձով հասարակական շինութիւնների վրա, և 450,000 հոգի էլ, որոնք անընդունակ էին աշխատելու, ամբողջ վեց ամիս ստանում էին ամեն օր ձրի նպաստ. բացի դրանից, 3,200,000 հոգու հաց և դրամ փոխ տրվեց։ Այդ բոլոր նպաստների համար ծախսվեց $6^1/_2$ միլիոն ֆունտ ստերլինգ, այն է 65 միլիոն ռուբլի։

Փորձը ցոյց տուեց, որ այդ նպաստները ամենեին չանբարոյականացրին ժողովուրդը, այլ, ընդհակառակն, ազատեցին նրան անխուսափելի մահից. յատկապէս կատարված հետազօտութիւնները ապացուցին, որ առատաձեռն օգնութիւնը ժողովրդին անընդունակ չը դարձրեց իր նախկին զբաղմունքը վերսկսելու համար, սովի վերջանալուց յետոյ, և թէ միայն չնորհիւ այդ օգնութեան, ոչ ոք սովամահ չեղաւ։

ԿՐԵՏԷ

Կրետէն դեռ չէ խաղաղվում։ Այս օրերս այնտեղ նոր խռովութիւններ են տեղի ունեցել։ Մի մուսուլման ազիտատոր, Բարդիս անունով, յարձակվում է Կանէայի քրիստոնեայ պրոկուրոր Կրեադիսի վրա, սրա զրասենեակում, ծանր նախատինք է հասցնում խօսքով և գործողութեամբ և հէնց նոյն տեղում վիրաւորում է դատաստանական քննիչին։ Ձերբակալվելով պրոկուրորի հրամանով, նա՝ սակայն, չուտով ազատվեց զինուորական իշխանութեան կարգադրութեամբ։ Պրոկուրորը բողոք յայտնեց այդ առիթով և տեղական նահանգապետը հրամայեց նորից կալանաւորել Բարդիսին։ Բայց հէնց նոյն զիշեր նահանգապետի տան առաջ հաւաքվեց բաշիբուզուկների մի մեծ խումբ և սկսեց սպառնալիքով պահանջել իրանց «հերոսի» ազատութիւնը։ Նահանգապետը ստիպված էր զիջել։ Երբ Կանէայի եւրոպական հիւպատոսները դիտողութիւն արին նրան այդ մասին, Բէրովիչ-փաշան իր արդարացման համար այն հանգամանքը առաջ բերաւ, որ նա բաւականաչափ այժեր չունի իր հեղինակութիւնը պաշտպանելու համար։ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը չափազանց յուզված է այդ առիթով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 14-ին Թիֆլիսի բոլոր քահանաները հրաման ստացան հաւաքվելու առաջնորդարանի դահլիճը։ Ժողովը բաց անելով՝ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան յայտնեց իր խիստ դժգոհութիւնը այն քահանաների մասին, որոնք թոյլ են տալիս իրանց՝ մերձաւոր իշխանութեան կարգադրութիւնների դէմ բողոքներ տալ բարձր իշխանութեանը, թոյլ են տալիս իրանց՝ Էջմիածին գնալու համար առաջնորդից, կօնսիստորիայից մերժում ստանալուց յետոյ, առանց անցաթղթի գնալ Էջմիածին և այնտեղից վերադառնալով, հաղար ու մի հրապուրիչ գոյներով նկարագրել, թէ ինչպէս Էջմիածնում սիրալիր կերպով են ընդունվել, թէ ինչպէս կօնսիստորիայի, առաջնորդի արած կարգադրութիւնները փոխել են տուել և այլն։ «Ահա այդպիսիներից մէկն է ձեզ լաւ ծանօթ Դաւիթ քահանայ Գիրգիդեանց, որին թեմական իշխանութիւնը փոխադրել էր իր եկեղեցուց մի ուրիշ եկեղեցի։ Սա, առանց անցաթղթի, գնացել էր Էջմիածին. այժմ այնտեղից վերադարձել է. ով գիտէ ինչ ստեր պիտի խօսի այստեղ-այնտեղ։ Ձեզ, բոլոր քահանաներիդ ժողովել եմ այսօր, որ կարդամ Կաթողիկոսի դիւանապետից այդ առիթով ինձ գրված նամակը»։ Կարդացվեց. նամակում մօտաւորապէս գրված էր, որ ներկայացաւ Վեհափառին Դաւիթ քահանայ Գիրգիդեանց. անցաթուղթ չունենալու համար յանդիմանվեց Մեսրոպ և Սուքիաս արքեպիսկոպոսներից. իսկ Վեհափառ Կաթողիկոսը պատուիրեց գրել - ձեզ, Թիֆլիսի առաջնորդիդ, Գիրգիդեան քահանային վերստին կարգել միաբան իր եկեղեցու, մինչև որ գործի քննութիւնը Էջմիածին - հասցնելով, ստանաք վերջնական որոշում։ «Ահա, լսեցիք ամենքդ,—խօսեց առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան, պատուիրում եմ բոլորիդ տարածել ամբողջ քաղաքի մէջ, որ Գիրգիդեան քահանան յանդիմանութիւն է ստացել առանց անցաթղթի Էջմիածին գնալու համար»։

Բացի դրանից առաջնորդը բացարձակ կերպով յայտնեց իր դժգոհութիւնը քահանաներին, ասելով, թէ ինչպէս սկզբներում իրան մօտ-մօտ անելով, միչնորդներ մէջ դցելով, պարգևներ ու չնորհներ են ստացել՝ փիլօն, կամիլաֆկա, խաչ, բայց յետոյ, դրանց լաւ ճանաչելուց յետոյ, համոզվել է, որ նրանք ամենևին արժանի չեն եղել այն պարգևներին։ «Այժմ էլ մի քանիսը դարձեալ մօտ-մօտ են անում, մարդիկ են մէջ դցում. չէ, այլ ես խաբվողը չեմ ես,—այժմ ամենքիդ ճանաչում եմ»։

Եւ այսպէս, առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը այս վերջին ժողովում Թիֆլիսի քահանաների մասին իր յայտնած մտքերով հաստատեց Էմմանուէլ քահանայի կրկնածները, թէ Թիֆլիսի քահանաները չեն հասկանում իրանց կոչումը, չեն երևում հասարակական հանրաչահ գործերում, արժանի չեն ստացած պարգևներին, կամ ուրիշ խօսքով՝ քանդեց նախորդ ժողովի վճիռները...

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՎԱՐՇԱՎԱ, 13 նոյեմբերի։ Վախճանվեց յայտնի անտեսագէտ, շատ հիմնարկութիւնների նախագահ, Անտոն Նագուրնի։

Կ. ՊՕԼԻՍ, 13 նոյեմբերի։ Նոյեմբերի 12-ին, Կրետէի ժանդարմէրիան վերակազմելու համար կազմված յանձնաժողովի նիստում, Թիւրքաց պատուիրակները բողոքեցին ասելով, թէ չէ կարելի օտար տարրերով լրացնել այդ յանձնաժողովը, բայց զինուորական գործակալները պնդում էին, թէ պէտք է գործադրեն իրանց առաջարկած միջոցը։ Վաղը նիստի արձանագրութիւնը կառաջարկվի պետական խորհրդի քննութեանը, և նոյնպէս դեսպանների խորհրդակցութեան առարկայ կը լինի։

ԹԷՀՐԱՆ, 13 նոյեմբերի։ Առաջին մինիստրը հրաժարականի խնդիրք տուեց, որը և ընդունվեց։ Մուշիր-Էդդաուլա արտաքին գործերի մինիստր է նշանակված, Մու-Կաբէր-Էդդաուլա—ներքին գործերի մինիստր. Մուֆէտ-Էդդաուլա—զինուորական մինիստր, և Աբբաս-Միրզա-Մուլկարա, Շահի հօրեղբայրը, արդարադատութեան մինիստր։

ՊԷԿԻՆ, 13 նոյեմբերի։ Վաշինգտոնի դեսպան Եանգ-Իւ փոխադրվում է Պետերբուրգ։

ԵՕԿՕՀԱՄԱ, 13 նոյեմբերի։ Սէուլից հաղորդում են, որ կալանաւորված են կօրէական մի քանի օֆիցէրներ, որոնք մեղադրվում են այն քանի համար, որ նրանք դաւադրութիւն կազմեցին թագաւորին ոյժով ստիպելու համար պալատ վերադառնալ։ Երեք ռուս օֆիցէրներ, 80 նաւատիների հետ միասին, մէկ թնդանօթով երէկ մտան Սէուլ։

ԲՕՄԲԷՅ, 13 նոյեմբերի։ Բաղուլ-Պինդից ստացված հեռագրական տեղեկութիւնից երևում է, որ այնտեղ ապստամբութիւն սկսվեց, որին մասնակցեցին պէնջաբեան հետեակ գնդի 200 սիպահներ։ Խռովութիւնը կողոպտվեցին. մի ոստիկան սպանվեց, մի քանի մարդիկ վիրաւորվեցին։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 14 նոյեմբերի։ Նոյեմբերի 13-ին, բոլոր մինիստրների ներկայութեամբ՝ սկսվեցին պատգամաւորների ժողովի նիստերը։ Երբ մինիստր-նախագահը կարդաց այն հաղորդագրութիւնը, թէ առաջիկայում թագաւորը հանդիսաւոր կերպով պէտք է բաց անէ պարլամէնտը թագաւորական ամբոցում, պատգամաւոր Կօմպատի յայտնեց, որ իր կուսակցութիւնը (ծայրայեղ ձախակողմ) պարլամենտի բացման հանդէսին ներկայ լինել չէ կարող, որովհետև այս հանդէսը պէտք է կատարվի պարլամէնտի շինութեան մէջ, և թէ թագաւորի ամբոցի վրա ծածանվում է սև-դեղին դրօշակ։ Մինիստր նախագահը, պատգամաւորների ժողովի համակրական բացականչութիւնների ուղեկցութեամբ, պատասխանեց, որ այդ պատճառաբանութիւնները ինքն անհիմն է համարում։

ՀՌՕՄ, 14 նոյեմբերի։ Սերբիական թագաւորը ժամանեց այստեղ պաշտօնական գնացքով։ Կայարանում Ալէքսանդր թագաւորին դիմաւորեց Ումբերտո թագաւորը։

ԼՕՆԴՕՆ, 14 նոյեմբերի։ Հաղորդում են, որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի պահանջել պարլամէնտից՝ գործող զօրքի ծախսերը մեծացնելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Բաթ. գուրս է գալիս	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գէշ.
Թիֆլիս Հասնում է	9 „ 55 „ եր.	12 „ 25 „ ցեր.
Թիֆլ. գուրս է գալիս	10 „ 50 „ „	1 „ 10 „ „
Բաքու Հասնում է	4 „ 49 „ „	7 „ 30 „ առ.

Բաքուից գուրս է գալիս	2 ժ. 30 ր. ցեր.	11 ժ. 5 ր. գէշ.
Թիֆլիս Հասնում է	8 „ 21 „ առ.	5 „ 50 „ եր.
Թիֆլ. գուրս է գալիս	9 „ 30 „ „	6 „ 50 „ „
Բաթում Հասնում է	9 „ 45 „ եր.	8 „ 15 „ առ.

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Էնդ հոդու համար		
Թիֆլիսից գուրս է գալիս	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Գելերում է	Մլետում	Պասանաուր
Վլադիկավկազ Հասնում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ.
Վեց հոդու համար (չէն գէլերում)		
Թիֆլիսից գուրս է գալիս	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. երեկ.
Վլադիկավկազ Հասնում է	12 „ —ցերեկ	8 „ 50 ր. „

ԻԳԼԻՍՆՈՒԹԵՆ ԹՈՒՅԼՏՐՈՒԹԵԱՄԲ

Մոսկվայի կայսերական համալսարանի մանկական կլինիկայի նախկին օրդինատոր

ԲԺԻՇԿ ԶԱՐԳԱՐԵԱՆՑ

Նոյեմբերի 16-ից սկսած պէտք է կարդայ մի շարք հրապարակական դասախօսութիւններ, ռուսերէն լեզուով, մանկական առողջապահութեան մասին։ Դասախօսութիւնները կը կարդացվեն չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երեկոյեան 5—6 ժամը, դասախօսի բնակարանում, Ստարո-Ինստիտուտսկայա փողոց, № 13, «Արտիստիական ընկերութեան» կից։

Ութ դասախօսութեան վճարը. . 5 ր. —
Ամեն մէկը առանձին . . . . — 75 կ.

Ուսուցչուհիները և դաստիարակչուհիներն արտօնութիւն են վայելում։ Ցօմսակները և ծրագիրը կարելի է ստանալ. 1) «Կենտրոնական գրավաճառանոցում». 2) Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում, «Կավկազ» հիւրանոցի տակ և 3) դասախօսի բնակարանում։ 1—1

Պատիւ ունեմ յայտնելու, որ մեր գրավաճառանոցում գտնվում են հետեւեալ պատկերները։

1) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿի պատկերը, շրջապատված վեց նշանաւոր կաթողիկոսներով, ծաղկապակներով. 2) ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ պատկերը վեց նշանաւոր գործիչներով. 3) ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆի պատկերը առանձին. մեծադիր արտանկարված Աբդուլայ եղբայրների լուսանկարից։

Երեք պատկերն էլ ճանապարհածախսով—1 ռուբլի՝ վճարը կանխիկ, կամ ուղարկել՝—15 հատ 7 կոպէկանոց մարկա։ Գումարով պահանջողներին 100 հատը 25 ր. ճանապարհածախսով։ Գումարով պահանջողները պիտի ուղարկեն փողի $^1/_3$ մասը պահանջի հետ։

Հասցէն. ԲԱԿՈՒ, գրավաճառանոց «Բաֆֆի»—Ա. Աւագեան։ (№ 134) 1—3

Լոյս տեսաւ

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ 1897 Թ.

(Իններորդ տարի)

շքեղ հրատարակութիւն, հարուստ ժամանակագրութեամբ, գինն է 60 կ.։ Գումարով գնողին նշանաւոր զիջումն։

Գիւտ քահ. Աղանեանց

(№ 134) 1—2

ԲԺԻՇԿ ԶԱՐԳԱՐԵԱՆՑ

Մոսկվայի Կայսերական համալսարանի մանկաբուժական կլինիկայի նախկին օրդինատոր, ընդունում է միայն հիւանդ երեխաներին ամեն օր, ժամի $11^1/_2$—1-ը։ Շաբաթ օրերը՝ ձրի։

Հասցէն՝ Ստարո-Ինստիտուտսկայա, տ. № 13.

№ 103 (չր.) 21—40

„ԱՐՕՐԻ“ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՍԵՂԱՆԻ

„ՕՐԱՑՈՅՑ“ 1897 Թ.

Դեկտեմբերի սկզբներում «Արօր» տպարանի հրատարակութեամբ լոյս կը տեսնի սեղանի պատկերազարդ օրացոյց։

Գինը 1 ռ. ճանապարհածախսով։

Ընդունվում են յայտարարութիւններ օրացոյցի մէջ տպագրելու, չափաւոր գներով։

Դիմել՝ Բաքու, տպարան «Արօր»։

(№ 126) 3—5

Բժշկապետ

Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ

Վելիամինովսկայա № 4, Դումայի հանդէպ։ Ընդունում է կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւն ունեցողներին 5—7 ժամ երեկոյեան։

(№ 127) 3—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վ. օրօնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդները ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 *ժ. վիրաբու ժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդու թիւնների։*

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 *ժ. աչքի, ներքին և նեարդային հ.*

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՈ—10—11 *ժ. կանանց և երեխ. հ.*

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 *ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—12—1 *ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։*

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ *ժ. ներքին և երեխայոց հ.*

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 *ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։*

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—5—6 *ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։*

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 *ժ. Սիֆիլիսի, մզի և տեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.*

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ *քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մզի, խիի, արեան, կաթի և այլն։*

Վճար 50 *կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։*

Հիւանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՑԹԱԿ»։ Մի քանի բօպէում նորոգում է հին, անխնարհ, խաղխած կահկարասիքը, պիանինօ, բոյալներ, հայելիի և ուրիշ շրջանակներ, արկղիկներ, տիրկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը։ ԳԻՆԸ՝ 1 ր.։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ—*միջոց ոտքի կոշտերից (մօզոլներ), եղունդներից և կաչուէ այլ ուռոյցքներից։* «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, եղունդները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում։ ԳԻՆԸ՝ 60 *կ.*։

Ծախվում է դեղարարական խանութներում։ Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների կովկաս. ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բաքու։

18—50 (22 №)

„ԲԱՐԻ ԳԻՇԵՐ“

Առանձին արժանաւորութեան փոչի միջատների դէմ

անմոռանալի մասնագիտութիւն

Ր. ԿԷՕԼԷՐ և ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ընկերութեան ֆաբրիկայի

ՎԱՃԱՌՈՒՄԸ

ամեն տեղ,

բոլոր փոքր ի շատէ նշանաւոր առևտրականների մօտ։

(№ 106) 6—15

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԶԷՅԹՈՒՆ

Տեղագրական, աղգագրական և վարչական տեսութիւն, Հ. Աճառեանի

Արտատպած «Մշակ» լրագրից, մի քանի յաւելումներով։ Գինն է 20 *կօպ.*

ԼՈՒՄԱՅԻ

ԳԱՌՕՒ ԸՆՏԱՆԻՔԸ

վէպը անմիջապէս ստանալու համար՝ պէտք է դիմել Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը, այսպէս՝ Тифлисъ, Центральная книжная торговля. 9—10



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՑԻՆ ՁԷԹ, *սմբակները պնդացնելու, կակղացնելու և սեացնելու համար։ Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման։* ԳԻՆԸ՝ 60 *կ. և* 1 *ր.*։

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, *կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, չինում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, չոքիչների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար։* ԳԻՆԸ՝ 75 *կօպ.*։

ԹԱՄԲԱՅԻՆ ՍԱՊՕՆ (*յատկապէս սպիտակ կաշուց չինած թամբերի համար*)։ *Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և զանազան գոյների կաշի մաքրելու։* ԳԻՆԸ՝ 1 *ր.* 25 *կ.*։

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում։

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բաքու։

(№ 22) 19—50

Մեծ Արժանաւորութեան

ՀՈՏԱՒԷՏ ՁՐԵՐ

„Պարսկական Եասման“

Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն

„Պարսկական Եասման“

Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եասման“

Սապօն „Պարսկական Եասման“

Պօմադա „Պարսկական Եասման“

Ընկերութիւն

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

Պրէյս-կուրանտը ձրի։

(*ամ.* 15,30) (№ 73) 3—9

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՁՈՒԹԱԿՆԵՐ։ ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ *ուղարկվում է ձրի։*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար կայսերական երաժշտական ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ,
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 35) 16—20

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ *հոգաբարձական խորհրդարանում այս տարվայ, նոյեմբերի 20-ին, երեկոյեան 8 ժամին լինելու է* ԱՃՈՒՐԴ *կապալով տալու երեք կրպակները նկուղներով, որոնք գտնվում են Սօլդատսկի բազարի մօտ, կուզնեչնի փողոցում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ, ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան* 10—2 *ժամը։*

1—1

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ *հոգաբարձական խորհրդարանում ներկայ նոյեմբերի 20-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է* ԱՃՈՒՐԴ *կապալով տալու դպրոցի կալուածքը, ընծայած հանգուցեալ յարութիւն Աքօյեանցից, որ գտնվում է Սաղում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ, ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան* 10—2 *ժամը։*

1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ *յայտնում է ի գիտութիւն ընկերութեան բոլոր անդամների, որ նոյեմբերի 17-ին, կիրակի, երեկոյեան ժամը 7-ին Դումայի դահլիճում նշանակված է ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները լինելու են՝*

1) *Ընկերութեան ընդհանուր, այն է կենտրոնի (խորհուրդ) և* 18 *ճիւղերի* 1895 *թ. հաշիւների քննութիւնն ու հաստատութիւնը։*

2) *Վերաստուգող յանձնաժողովների զեկուցումները այդ հաշիւների մասին։*

3) *Հին-Նախիջևանի և Ցխինվալի տեղական վարչութիւնների նախահաշիւները և Կարսի ու Արմաւիրի յաւելուածական նախահաշիւները* 1896 *թ. համար։*

Ընկերութեան 1895 *թ. տեղեկագիրը տպագրված լինելով, անդամները կարող են մի մի օրինակ ստանալ՝ դիմելով ընկերութեան գրասենեակը (Սէրգիեվսկայա փողոց տուն № 16.)*

3—3

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ՓԱՌԱԿԱԶՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՑՑ 1897 Թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ *և այլ պատկերներով զարդարած*

ԳԻՆՆ Է 20 Կ.

Վաճառվում է Թիֆլիսում, կենտրոնական և «Արարատ» գրավաճառանոցներում, վիճակային կօնսիստօրիաներում և հոգևոր կառավարութիւններում։ Մեծ քանակութեամբ գնողին 20% *զիջումն, եթէ դիմեն ս. Էջմիածնի տպարանական ժողովին այս հասցէով.* Св. Эчміадзинъ, Типографич. Комитету.

(№ 131) 4—10

ԹՔՎԻԲՈՒԼԻ ՔԱՐԱԾԽԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԻ ԵՒ ԲՐԻԿԷՏԻ

արդիւնագործութեան ընկերութեան վարչութիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն գնողների, որ յիշեալ ընկերութեան բրիկէտների վաճառումը լինում է իր տեղում, պուդը 13 *կօպէկով։ Մանրամասն պայմանները կարելի է իմանալ հանքերի գրասենեակում։*

Հասցէն հեռագիրների համար՝ «Тквибульскія копи, управленіе». *Նամակների համար—*Кутаисъ—Тквибули, Управленіе Тквибульскихъ копей и брикетнаго производства.

(№ 124) 11—15

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ Մ. ՁՄՇԿԵԱՆԻ

„ՊԱՏԻ“, „ԾՈՑԻ“ ԵՒ „ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ“ 1897 *Թ.*

ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ

Ցանկացողները թող շտապեն յայտնելու, որպէս զի պատուէրները ժամանակին կատարվեն։

(№ 120) 13—15

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՈՍՍԻԱ“

Բարձրագոյն հաստատված 1881 թվին

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 25.500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութիւնը ընդունում է։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսինքն դրամագլխի և եկամտի ապահովութիւն ընտանիքի համար, կամ ծերութեան ժամանակ, օժիտ աղջկերանց համար, ստիպենտիա երեխաների համար և այլն. առանձին չնչաւէտ պայմաններով. ապահովագրողները մասնակցում են ընկ. օգտին։

Առ 1-*ն յունվարի* 1896 *թ.* «ՐՕՍՍԻԱ» *ընկերութիւնը ապահովագրած ունի* 35.563 *անձ,—*91.406.948 *բուբլի գումարի։*

ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս առանձին անհատների նոյնպէս և հաւաքական անձանց, այն է—գործարաններում ծառայողների, բանուորների և այլն՝ նուազեցրած վճարներով՝ չնորհիւ զիվիդենտի, որը վճարներից դուրս է հաշվում։

ՀՐԴԷՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի (շինութիւնների, մեքենաների, ապրանքի, կահ-կարասիքի և այլն)։

ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

դետային, ցամաքային և ծովային. նաւերի ապահովագրութիւն.

Ապահովագրութիւն ընդունվում է Ս. Պետերբուրգում (Большая Морская, соб. д. № 37.) *Թիֆլիսում Սերգիէվսկի փողոց,* № 6. *և զանազան քաղաքների գործակալութիւններում.*

Նոյնպէս կարելի է ստանալ ապահովագրական տոմսակներ դժբաղդ դէպքերից, երկաթուղիով կամ շոգենաւով ճանապարհորդած ժամանակ, երկաթուղային կայարաններում և ծովամատոյցներում։

(№ 89) (2) 34—52

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Ноября 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.